ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՁԵԹԻ ՍՏԱՑՄԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Հայ ազգագրական իրականությունից հայտնի է ձիթատու բույսերի հատիկների օգտագործման երեք եղանակ: Առաջինը դրանց կիրառումն է սննդի համակարգում, հում կամ բռված վիճակում, երկրորդը՝ ծեծված զանգվածի (անուշուրթ) պատրաստումը: Օգտագործման երրորդ սամենակարևոր բնագավառը հատիկներից ձեթի ստացումն էր: Անուշուրթի և ձեթի ստացման նախնական և սամենապարզ միջոցը բռված հատիկների ծեծումն էր սանդերի ու հավանգների մեջ և զոյացած զանգվածից, տաք ջրի միջոցով, ձեթի զտումը:[1]

Հատիկների վերամշակման պարզագույն միջոցները Հայաստանի և հարակից տարածքներից հայտնաբերված բազմաթիվ աղորիքները, սանդերն ու հավանգներն են, որոնք հազարամյակների ընթացքում զարգանալով, պարզագույն տրորիչից հասան պտտվող ադացաքարին:

Հայաստանի լծակավոր ադորիքների առանձին նմուշները ի հայտ են գալիս ավանդական պարզունակ ադորիքների կողքին դեռևս մ. թ. ա. 4-րդ դարից:[2]

Մինչև օրս էլ Հայաստանի բազմաթիվ գյուղական բնակավայրերում հանդիպում են քարե սանդեր, որոնք այժմ հազվադեպ են օգտագործվում: Դրանցում վերամշակվել է նաև կանեփ, տզկանեփ, կանրջակ, ընկույզ, սակավադեպ՝ ձմերուկո ու սեխի չորացրած սերմեր, որպես ձեթի ստացման լրացուցիչ հումք:

Հատիկները նախապես կավամաններում բռվել են, ապա սանդերի մեջ կամ սալ քարերի վրա, մակույկաձև ու գնդաձև որձաքարերով տրորել: Ստացված զանգվածի վրա, որ կոչվում էր անուշուրթ, խին կամ խեղեփ,[3] տաք ջուր են լցրել և խառնել, մինչև յուղային մասը բարձրանար ջրի երես, որտեղից այն շերեփներով հավաքել են: Այս աշխատանքները կանայք են կատարել:

Պետական խոշոր կազմավորումներն առաջ են բերում նաև արտադրական կառույցների անհրաժեշտություն, որոնք փոխարինելու են գալիս տնայնագործական պարզունակ միջոցներին կամ գործում են դրանց զուգընթաց: Դա վերաբերում է նաև ձիթհանությանն ու ձիթհաններին:

Թե երբ են ձիթհանները սկսել գործել Հայկական լեռնաշխարհում, հայտնի չէ: Հայաստանի տարածքում առայժմ հայտնի հնագույն ձիթհանի շենքը վերաբերում է հայ ժողովրդի պատմության բիայնական շրջանին: Այն հայտնաբերվել է Կարմիր բլուրի պեղումների ժամանակ: Շինությունը կազմված է եղել ներքին դռներով իրար կոց եբեք եբկայնական սրահից, որոնցից մեկում զտնված քնջութի մեծ կուտակումը թույլ է տալիս ենթադրելու, որ դա ձիթհան է եղել:[4]

Հնագույն գրավոր հիշատակությունը ձեթի մասին, վերաբերում է բիայնական շրջանին. դա Սարդուրե Բ արքայի արձանագրությունն է Վանի Միհրի դուռ ժայռի վրա, որտեղ այլևայլ ավարների թվում նշված է նաև ձեթը:[5]

Վերոհիշյալ փաստերի հիման վրա կարելի է ենթադրել, որ այդ ժամանակաշրջանում ձիթհանությունը, որպես տնտեսության առանձին ճյուղ, արդեն ձևավորվել էր: Բնականաբար, ուրարտական պետության կործանման հետ մշակութային այդ տարրը չէր կարող վերանալ, քանի որ այն կոոդ ժռդովուրդը կար:

Ձեթի արտադրության մասին են վեայում Հայաստանի գրեթե բոլոր հնավայրերից հայտ-

---

[1] *Х.А. Вермишев*, ук. соч., с. 207.
[2] *С.А. Есаян*, Древняя культура с-вост. Армении, Ереван, 1976, с. 201, *Գ.Գ. Քոչարյան*, նշվ. աշխ, էջ 35:
[3] *Ս. Ամատունի*, ԲԲ, էջ 273:

[4] *Զ.Ս. Ղասաբյան*, Ձիթագործությունը Ուրարտուում, Տեղեկագիր հաս. գիտ.,4, Եր., 1957, էջ 108, *Б.Б. Пиотровский*, Кармир-блур 1, Археологические раскопки в Армении, 1, Е., 1950, с.28.
[5] *Г.А. Меликишвили*, УКН, с. 228.

նաբերված բազմաթիվ ձիթաճրագները, որոնք աննշան ձևափոխությամբ օգտագործվել են ընդհուպ մինչև 20-րդ դարի սկիզբը:

Դեռևս Սահակ Պարթևի կանոններում ձիթհանը հիշատակված է որպես առանձին կառույց. «կալք ցորենոյ եւ հնձանք գինվոյ եւ իւղոյ»:[6]

Եկեղեցիներին տրվող հասերը սահմանված են Գրիգոր Լուսավորչի և Տրդատ թագավորի կողմից, որոնք քրմերի որդիներին, նորահաստատ քրիստոնեական տաճարները սպասավորելու համար խոստացան. «բոլոր ժողովրդից կստանաք հասեր...կալից և հնձանից և ուրիշ արմտիքներից տասնորդ տան բոլորը ձեզ, որ աճումը լաւ և առատ լինի»:[7] Նվիրատվությունների կարգն ու ձևերը սահմանված են դեռևս Սահակ Պարթևի կանոններում. «Իշխանք գգեաւղս եւ գղաստակերտս եւ գգանձս ոսկւոյ եւ արծաթոյ, այլք յանդաստանաց եւ ի պաճարաց եւ ի հանդերձից պատուականաց...»:[8]

Արդեն իններորդ դարում Հայաստանի բազմաթիվ բնակավայրերում եղել են քնջութի և կտավատի հատիկներից ձեթ ստանալու ձիթհաններ:[9] Այդ շրջանում բարձր զարգացման հասած ձիթհանության մասին են վկայում մի շարք վիմական արձանագրություններ, որոնք հիմնականում նվիրատվական բնույթ ունեն:

13-րդ դարում գանձագին նվեբները շատ հաճախակի և սովիրական երևույթ են դառնում: Միայն «Վիմական տարեգրում» առկա են 50-ից ավելի արձանագրություններ, որոնք վերաբերում են վանքերին գանձագին գյուղեր, հողեր, այգիներ, տներ, կուղպակներ, ջրաղացներ, ձիթհաններ, հնձաններ, քարհանք և այլն նվիրաբերելուն:[10]

Միջնադարյան արձանագրություններում և ձեռագրերում այդ նվիրատվությունները հայտնի էին վակֆ, ոխֆ, ոխվ և այլ ձևերով, որ արաբերեն է և նշանակում է. «կանգ առնել, ամրանալ», այսինքն եկեղեցական հաստատություններին նվիրված կալվածքներ ու ստացվածքներ, որ ենթակա չեն օտարման:[11] Դրանք վանքերին ու եկեղեցիներին էին նվիրում մեծահարուստները, որպես հասութաբեր հաստատություններ:

Բազմաթիվ վկայություններ կան վանքապատկան տնտեսություններում ձիթհանների կառուցման և վերանորոգումների մասին: Սիմեոն Երևանցին գրում է, որ Մայր աթոռը Վաղարշապատում ունեցել է երկու ձիթհան, որոնցից մեկը 1667թ. վերանորոգվել է:[12]

Մեզ հայտնի ամենահին արձանագրությունը, որտեղ հիշատակություն կա ձիթհանի մասին, փորագրված է Անիի Աբլղարիբ Պահլավունի եկեցու վրա. «Ի :ՆՁԵ: (1036) թուականիս, ես Ապլղարիպ մարգպան որդի Գրիգորոս իշխանի եւ թոռն Ապուղամրի եւ եղբայր Վահրամա եւ Վասակա, շինեցի գսուրբ Փրկիչս ի մայրաքաղաքս յԱնի շատ ջանիւ եւ մեծածախ գանձիւ եւ գնեցի հալալ ընչից իմոց կուղպականի :Գ: եւ ձիթիաց եւ այգի եւ հողեար եւ ետու ի սուրբ Փրկչիս...»:[13] Այս արձանագրությունը հիշատակում է նաև Մ. Բժշկյանցը, ձիթհացի փոխարեն ձիթհանք գրելով:[14] Արցախի Դաղիվանքի :ՉԺԴ: (1265թ.) մի արձանագրության մեջ գրված է.«ես՝ Ամբատ իշխանս...յեղեգիս իմ գնած ձիթհանք...ետու սուրբ Կաթողիկէս..»:[15] Նույնիմաստ մի արձանագրություն կա Թանահատի վանքի սբ. Ստեփանոս եկեղեցու արևելյան պատին. «...ես Հասիկ շինեցի գասարանոցն եւ տվի Վարագա Սբ. նշանիս...թվիս :ՉԿ: (1311)»:[16] Սրանոց բառը հիշատակված է նաև Արցախի Քոչազ գյուղի եկեղեցու արձանագրության մեջ.«..Յանուն Աստուծոյ, ես՝ Հէկազ սրանոցին հայրէնիքն :Դ: բաժին :Ա: իմ էր էտվի վախմ Ըստեփանոսին»:[17]

Հնում ձիթհանը անվանվել է նաև ասարանոց կամ սրանոց: Սրանոց-ասարանոց ձևը

---

[6] *Կանոնագիրք Հայոց*, հ. Ա, աշխ. Վ. Հակոբյանի, Եր., 1964, էջ 397:
[7] *Ն.Վ. Մելիք-Թանգեան*, Հայոց եկեղեցական իրաւունքը, Շուշի, 1903, էջ 531:
[8] *Կանոնագիրք Հայոց*, հ. Ա, էջ 412:
[9] *Բ.Ն. Առաքելյան*, նշվ. աշխ, հ. 1, էջ 49:
[10] *Բ.Ն. Առաքելյան*, նշվ. աշխ, հ. 2, էջ 56:
[11] *Լ.Խաչիկյան*, Տնտեսական գործարքների մասին գրառումները հայերեն ձեռագրերի մեջ և նրանց աղբյուրագիտական նշանակությունը. Բանբեր Մատենադարանի, 9, 1960, էջ 22:
[12] *Ջամբռ*, համաժողովեցեալ եւ շարադրեցեալ ի Սիմէօնէ կաթողիկոսէ Երեւանցւոյ, Վաղարշապատ, 1873, էջ 190-191:
[13] *Դիվան*, հ. 1, 1966, էջ 44:
[14] *Մ. Բժշկեան*, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, 1830, էջ 73:
[15] *Դիվան*, հ. 5, 1982, էջ 206:
[16] *Դիվան*, հ. 3, 1967, էջ 77:
[17] *Դիվան*, հ. 5, 1982, էջ 194:

հանդիպում է նաև Վաղադնի վանքի սբ. Կարապետ եկեղեցու արձանագրություններից մեկում. «Ես Թուքանս միաբանեցա Սբ. Կարապետիս և գնեցի ի Վաղադնոյ զասընոցին :Ը: (8)բաժնէ զմինն...»:[18] Հեբհերի վանքի Աբ. Աստվածածին եկեղեցու արձանագրությունը. «Ես՝ Վարդան վարդապետս գասարնոցիս չարէքն ի հիւսնէն գնեցի, ի սուրբ ուխտս տվի... թվ. :ՉՕԷ: (1308)»:[19] Սրանց բառը հանդիպում է նաև Գեղարքունիքի մարգի Գեղհովիտ գյուղի ձիթհանի պատին ագուցված խաչքարի արձանագրությունում.«Կամաւն Այ ես՝ Դուկաս եւ եղբայրն իմ Մվանս, որդի Ներսէսին, շինեցինք սրանոցս...թվին :ՌԾ: (1651)»:[20] Արցախի Խնձրիստան գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցու մուտքի ճակատակալ քարին արձանագրված է. «Յիշատակ է սբանոցս շինեցաւ Մելիք Ալահվերդին, որ էր որդի Մելիք Միրգայախանին, թվ :ՌՄԼԱ: (1782)»:[21]

Մրենի տաճարի 1320թ. արձանագրություններից մեկը վեայում է. «...ես՝ Իւանիկս... գայս արձան հաստատեցաք ու գձթիհակն եկեղեցոյս ընձայ տվաք մեր հոգոյն համար...»: Հ. Օրբելին ընթերցել է ձիթահաք, որը թնակչությունից գանձվիդ ձեթի բնատուրք է եղել:[22] Վերոհիշյալ հաղկը հիշատակված է նաև Հովհաննավանքի արձանագբություններից մեկում: Հաճախ վանքերին նվերաբերվիդ ձիթհանները գտնվում էին տվյալ վայրից բավականին հեռու, Հայաստանի այլ գավառներում: Սանահնի վանքի մեծ գավթի արձանագբություններից մեկը վկայում է. «Ի թուիս :ՈՀԸ: (1229) ես՝ Մամախաթուն ամուսին Վաչէի, ետու զիմ գանձագին ձիթհանքն յԱնի զիշխանի ակն (թաղամաս Անիում-Հ. Ա.) յԱծածինս»:[23] Նույն Մամախաթունը ձիթհան է նվիրել նաև Հաղբատի վանքին:[24] Սանահնի վանքին ձիթհան նվիրաբերելու մասին է վեայում 1291թ. մի այլ արձանագբություն. «Կամաւն Այ, ես՝ Զնէլանց Մելիքս միաբանեցա սբ. Աածածնիս եւ էաու գիմ կէս ակն ձիթահանքն Սինիս»:[25]

Զաքարիա Քանաքեռցու մոտ կարդում ենք. «թուին (...) եղև Հայոց Խաչատուր. Սա շինեաց ջրաղաց մի և երկուս ձիթահանս ի միում տան ի գիւղն իւր Քասադ, և ետ յիշատակ սբ. Կարապետին (Հովհաննավանք)»:[26]

Անիի Մայր տաճարի հարավային պատի արձանագրության մեջ գրված է. «..Թուին :ՉԼԵ: (1286) կամաւն Այ. ես Ըոոբեն ծառայ Այ...ետու ընծա ի սա գիմ գանձագին ձիթահանքն բոլոր մին ակն իւր ամենայն յաջողութեամբ»:[27] Արձանագբությունից երևում է, որ ամբողջական կառույցներից բացի, նվիրաբերվել է նաև դրանց գործաբկումից ստացվիդ հասույթի մի մասը: Այդ է վկայում նաև Անիի Տիգրան Հոնենցի եկեցու աբձանագրություններից մեկը.«...գնեցի կալն եւ:Բ: (2) ակն ձիթահանք եւ ախոռնի եւ մարագնի վանիցս»:[28] Բագնայրի արձանագրություններից մեկում գրված է. «Ես սարկավագս ետու զիմ Ձիթահնաց կէս ակն որ ի Կարուց դրան...»:[29]

Հոռոմոսի վանքի գավթի արձանագբություններից մեկում վկայված է. «:ՈՀԸ: (1229թ.) շնորհիւն Քբ. ես Վասակ որդի Դաւթի թոռն Կիւրիկէի...ետու ի սուբբ Յովանէս ընծայ զիմ գանձագին ձիթահանքն որ ի վանացս գնեցի վճռամբ եւ ամենայն ամրութեամբ յառաջնորդութեան տեառն Բաբգդի...»:[30]

Շիրակի միջնադարյան մեգ հայտնի երկու աբձանագրություններում հանդիպում ենք ձիթագին բառաձևին, որը տակավին հստակոբեն չի ստուգաբանվել: Հոռոմոսի սբ. Հովհաննես եկեղեցու վիմագբերից մեկում նշված է. «Թվ :ՉԲ: (1253)...ես Յոհաննէս արքաուն որդի Ապրկան եւ ամուսին իմ Մուլուքան միաբանեցաք Հոռոմոսի վանաց սբ. Յովանիսի...տվի յամեն տարի որչափ կենդանի եմ :Ե: (5) դահեկան ձիթագին...»:[31]

«Ձիթագին» բառեգրը ևս մեկ անգամ հիշ-

---

[18] *Դիվան*, հ. 2, 1960, էջ 104:
[19] *Դիվան*, հ. 3, 1967, էջ 52:
[20] *Դիվան*, հ. 4, 1973, էջ 225:
[21] *Մ. Բարխուդարյան*, Արցախ, Բագու, 1895, էջ 160:
[22] *Ս. Ավագյան*, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Եր., 1978, էջ 81-83:
[23] *Կ.Գ. Դաֆթարյան*, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Եր.,1957, էջ 134:
[24] *Կ.Գ. Դաֆթարյան*, Հաղբատ, ճարտարապետական կառուցվածքները և վիմական արձանագրությունները, Եր., 1963, էջ 174:
[25] *Կ.Գ. Դաֆթարյան*, Սանահին, էջ 139:
[26] *Զաքարիա սարկավագ Քանաքեռցի*, Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870 հ. 1, էջ 31:
[27] *Դիվան*, հ. 1, 1966, էջ 36:
[28] *Անդ*, էջ 63:
[29] *Ղ.Ալիշան*, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 120:
[30] *Ղ. Ալիշան*, Շիրակ, էջ 23:
[31] *Ա.Թ. Պալատեան, Ժ.Մ. Թիեթի, Ժ.Փ. Մանէ*, «Թ. Թորամանեան, Հոռոմոսի վանքը անտիպ նյութեր», Փարիզ 2002, էջ 190:

ված է Անիի սբ. Գրիգոր եկեղեցու 1271թ. նվիրագրում: Այստեղ, նկատի ունենալով այդ բառին հաջորդող «զոր ի հիմանց շինեցի» բառակապակցությանը, որոշ ուսումնասիրողներ այն նույնացրել են ծիթհանի հետ:*

Ձիթհանների նվորատվությունների մասին բազմաթիվ վավերագրեր են պահպանվել հայերեն միջնադարյան ձեռագրերի հիշատակարաններում: Մատենադարանի թիվ 4515 ձեռագրում կա նման մի հիշատակություն. «Յանուն Աստուծոյ...ես պարոն Հայրուտս, գնեցի ի Սապուխի որդոյ Մահմատայ գձորի յեզեր ձիթահանքն սուրբ Կաթուղիկէիս լուսացու...ի թուականութեան հայկազեան տոմարի :ՉՁԴ: (1335)»:[32]

Ձիթհանի և այլ արտադրական կառույցների նաև խմբակային նվորատվության դեպքեր են հայտնի. նման մի փաստ է նշված 1415թ. մի ձեռագրի հիշատակարանում:[33] 1611թ. Վանում գրված մի ձեռագրի հիշատակարանում նշված է Վարագա վանքին նվիրաբերված աղացաքարի մասին. «Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս Աստուած, օղորմի ասացէք Մահդասի Դարիպջանին,...որ յԱկոբի Խէքէնց ձիթխցից թըլթ մի ձիթխաց գնեց եւ...ոխֆ արար ի դուռն Յայնկուսնեբոյ Ս. Աստուածածնին: Ձիթխացի քար մի եբեր Աորփայկենայ քարէն, թուին :ՌԿ:, բազում չարչարանօք, ի յահագին ծանրութենէն շատ տաւար սախաթ եղան, բերիք հասուցիք ի Վան: Ինչ որ տեսաք Վարագայ ձիթխացն պաբապ էր, ոխֆ արի զքարն ի դուռն Վարագայ որ տաբան գձիթխացն բան հանին »:[34]

Բացի ձիթհանից, նրա մի մասից կամ ստացված եկամտից տրվող նվիրատվություններից, միջնադարյան Հայաստանում կար նաև շատ հետաքրքիր մի ձև, որի դեպքում հողատիրոջ կողմից իր հողամասի նվորատվությունը որևէ վանքի կամ եկեղեցու չէր նշանակում, թե այն գյուղական համայնքի սեփականությունից վերածվում էր վանքապատկանի: Այս պարագայում հողի վարձակալը պարտավորվում էր եկեղեցուն տալ ստացվելիք բերքի վեցերորդ մասը կամ որոշակի քանակության ձեթ:[35]

Վակֆի մի տարօրինակ ձև է հիշատակվում 1612թ. մի ավետարանի հիշատակարանում. «...ի յիւր ձիթխացէն յամիսն աւր մի ողֆ արար դուռն սբ. Կիրակոսին: Ինչ մարդ զէնդ աւրն, ով որ բանիցուցի, յիւր շաբթուն զձեթն յեկեղեցին տալ, ով չի տա ու խակառակի զանէծք Կաէնին առցէ և գխաչ խանողացն ամէն»:[36]

Հայոց եկեղեցին արգելում էր իրեն պատկանող գույքը և կայքը վաճառել. այսպես Պարտավի եկեղեցական երկորոր ժողովի (768թ.) 14-րդ կանոնը արգելում է եկեղեցու ունեցվածքի վաճառքը. «Որք...եւ վաճառեսցէ զեկեղեցի կամ զսպաս սրբութեան կամ ի կարասւոյ կամ յանղաստանաց եկեղեցւոյ նզովեսցի յԱստուծոյ եւ ի մէնջ»:[37]

Վանքերը ձիթհաններ ձեռք էին բերում նաև գնմամբ:[38] Գեղարդի վանքը ձիթհաններ ուներ Բարձաբի, Շահաբ և Ծար գյուղերում. «այլ և ունի ի սոյն գեօղս (Նորք) գկեսաձիթհանք մի, որ սոյն գեօղացի Վարաքի որդի Սիմէօնն ծախէ եբկու թումանի, ձեռամբ սոյնոյ վանից Առաջնորդ Պետրոս վարդապետին ի :ՌՃՁԵ: (1736) թուին մերում»:[39]

17-18-րդ դարերում Այունիքի մենաստանները, ինչպես և Հայաստանի շատ եկեղեցական հաստատություններ, տիրելով հսկայական քանակության հողերի, ստացված բերքը վերամշակելու համար պետք է ունենային սեվական արտադրական կառույցներ:[40]

Մեզ են հասել ձիթհանի արձանագրված մի քանի աղացաքարեր: Դրանցից հնագույնը սբ. Գրիգոր Բարձբաքարշ եկեղեցու ձիթհանի աղացաքարն է. «ի թվ :ՉՁԵ: (1336) ի պարոնութեն որդոց Մարձպանաց Վահրամ եւ Մամիկոն շինեալ արդեամբք ի վարդապետէ Գորգա»:[41] Այդպիսի մի աղացաքար է հիշատակ-

---

* Վիմագրագետ Գ. Սարգսյանը քննելով սույն ռառեզրի երկու վկայությունները, գտնում է, որ այստեղ գործ ունենք նվիրատուի կողմից եկեղեցու ձեթի կարիքները հոգալու փաստի հետ: Այսինքն՝ եկեղեցուն հատկացվել են միջոցներ ձեթ գնելու համար (ձեթ-ձիթ-ա-գին): Այս կարծիքը Գ. Սարգսյանը հայտնել է զրույցի ժամանակ:

[32] *Լ. Խաչիկյան*, նշվ. աշխ, էջ 23:

[33] *Նստարք Հայոց*, էջ 74:

[34] *ՀՁՀ*, ժէ, հ. Ա, էջ 427:

[35] *Լ. Խաչիկյան*, նշվ. աշխ, էջ 23:

[36] *ՀՁՀ*, ժէ, հ. Ա, էջ 463:

[37] *Կանոնագիրք Հայոց*, հ. Բ, Եր., 1971, էջ 11:

[38] *Գ.Մ. Գրիգորյան*, Այունիքի վանքապատկան կալվածատիրությունը 9-13-րդ դդ., Եր., 1987, էջ 119:

[39] *Ջամբռ*, էջ 274-275:

[40] *Մ.Մ. Հասրաթյան*, Այունիքի 17-18-րդ դարերի ճարտարապետական համալիրները, Եր., 1973:

[41] *Գ. Կարախանյան*, Դաեղի միջնադարյան ձիթհանը և նրա շինարարական արձանագր.ՊԲՀ, 4, 1974, էջ 252:

վում երնջակի Ներքին Ազնուր գյուղում. «Այս սրանոցն Ալեքսանի որդւոյն թվին :ՌՃՀ: (1701)»:[42] Նման մի արձանագրված քար է հիշատակում Ղ. Ալիշանը Վայոց ձորի Խաչիկ գյուղի մոտ, Մռահոդ գյուղատեղում. «Կուկեցի ուստա Յովհաննէս նկարաքար. ես Մամսոն որդի Տէր Յովհաննէսի Տէր Ամմուէլի[43] :

Արձանագրված աղացաքարեր կան նաև Վայոց ձորի Հորս :ՌՃԲ: (1603թ.),Գեղարքունիքի Վաղաշեն :ՌԿ: (1611թ.) գյուղերում[44] և Բերդ ավանում: Ջավախքի Սաթիա գյուղի ձիթհաններից մեկի աղացաքարին ուղտեբի քարավանն է քանդակված:[45]

Նման աղացքար կա նաև Տավուշի մարզի Նավուր գյուղում: Սա առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ արձանագրության մեջ նշված են ձիթհան և սրանոց բառերը: Ձիթհան բառը բոլորածն, մեր կարծիքով հիմնական տեքստի մեջ է գրված: Նրանից սառանձին կարդացվում է երկու բառ.«յիշատակ է սրանոցս»: Երրորդ բառը, որ տաշված ու քերված է, ամենայն հավանականությամբ անուն է եղել: Թվագրված է :ՌՃՀԸ: (1729թ.):[46] Կարծում ենք, որ այս աղացաքարի վրա արձանագրված ձիթհան և սրանոց բառերը գրված են տարբեր ժամանակներում, դրանց նույնիսկ տառատեսակները տարբեր են: Ցույց տալու համար, թե այս բառերից որն է ավելի հին ու հարազատ հայերենին, հարկավոր է վերլուծել սրանոց բառը: Այն մատենագիր աղբյուրներում չի հանդիպում:[47] Ինչպես արդեն նշվեց, առկա է միայն մի շարք վոմական արձանագրություններում: Սրանոց-ասարանոց բառաձևերը, հավանաբար, ավելի բնորոշ են եղել խոսակցական լեզվին: Մինչև այժմ էլ Սյունիքում, Արցախում, Տավուշում և Վայոց ձորում այն գործածական բառ է: Տավուշում օգտագործվում են նաև ձիթհանք և ծիթիհանք ձևերը: Սրանոց բառը անխաթար ձևով պահպանվել է միայն Արցախի և Սյունիքի խոսվածքներում:

«Գիրք վաստակոց» թարգմանական գրքում հանդիպում են մասարայ և մասարաքար արտահայտությունները. «գձիթին մասարայսն և զջաղացանին և զամանսն սպրկիկ եւ անուշահոտ պարտ է առնել,...ի մասարաքարն ի թեթեւն աղա...»:[48] Ասաբանոցը կազմված է արաբերեն «ասար» բառից և հայերեն անոց՝ տեղ ցույց տվող ածանցից, ասար բայը նշանակում է մամլել, ճմլել, քամել:[49]

Տաթևի վանքի արձանագրություններից մեկում, Ղ. Ալիշանի մեկնաբանությամբ, հանդիպում է սբանոց-ջրաղաց բառակապակցությունը:[50] Դա սխալ ընթերցման արդյունք է, իրականում սրանոցի փոխարեն քարահատին է գրված:[51]

Միջնադարյան Իրանում կենդանու ուժով աշխատող աղացը կոչվել է **acua**, տարբերակվել են նաև **ac**, ջրաղաց և **xapac**, վենդանու ուժով աշխատող աղացները:[52] Հավանաբար, սեմական **asar** բառաձևը հայերեն խոսակցական լեզվին է անցել պարսկերենի միջոցով, չնայած չի բացառվում նաև նրա անցումը արաբերենից, առանց պարսկերենի միջնորդության:

Հայաստանում ձիթհանների լայն տարածման մասին են վկայում մի շարք տեղանուններ, որոնք կապված են ձեթի արտադրության հետ: Արաքս գետի ափին եղել է Ձիթհանք անունով գյուղ, որն ավերվել է 19-րդ դ. սկզբներին՝ երկրաշարժից: Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում այժմ էլ կա Ձիթհանքով անունով գյուղ: Լոռու մարզի Շնող գյուղի մոտակայքում կա մի վայր, որը կոչվել է Ձիթհանքի ճալա: Լոռվա ամենաբարձր լեռնագագաթներից մեկը միջնադարում կոչվել է Ձիթհանքասար: Աանահնի վանքի արձանագրություններից մեկում հիշատակվում է Ձիթհանոց ձոր տեղանունը:[53] Բասենում եղել է Ձիթահող կամ Ձիթող անվամբ գյուղ:[54] Տավուշի մարզի Սևքար գյուղի հանդամասում, Առաքելոց եկեղեցու մոտ, Կիրանց գետի վրա

---

[42] *Արարատ*, 1872, 8, էջ 309:
[43] *Ղ. Ալիշան*, Սիսական, էջ172:
[44] *Դիվան*, հ. 3 1967, էջ 168, Դիվան, հ. 4, 1973, էջ 186:
[45] *Ա. Իսոյան*, Սաթիա, Եր., 1995, էջ 133:
[46] *Ա.Հորոպյան*, Սրանոց, թե՞ ձիթհանք (ձիթհանությանը վերաբերող նորահայտ վիմագրության առնչությամբ), Հանր. գիտ. նստաշրջան նվիրված 1982-1983 թթ. սազգ. և բան. դաշտային հետազոտությունների հանրագումարին, թեզիսներ, Եր., 1984, էջ 23:

[47] *Ս. Ավագյան*, Վիմ. բառ., էջ 31:
[48] Գիրք վաստակոց, էջ 76:
[49] *Ս. Ավագյան*, Վրն. բառ., էջ 31-32:
[50] *Ղ. Ալիշան*, Սիսական, էջ 238:
[51] *Դիվան*, հ. 2, էջ 20:
[52] *И. Петрушевский*, ук. соч., с. 155-156.
[53] *Կ.Գ. Դաֆթարյան*, Սևանահին, էջ 137:
[54] *Ն. Պողարեան*, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոյ Յակոբեանց, Երուսաղեմ, 1972, էջ 101:

պահպանվել է 14-րդ դարի մի քարե կամուրջ, որը կոչվում է Սրանոցի կամուրջ: Դարաակզբին դրա մոտակայքում համանուն փոքր գյուղ է եղել, ուր եղել են նաև ձիթհաններ:[55]

Կ. Գաբիկյանը Սվազում հիշատակում է Կովտուն անունով գյուղ, հնարավոր է, որ այս անվանումը առաջացած լինի կոպտոն (քուսպ) բառից, որ տեղի խոսվածքում կովտուն է հնչում:[56]

Տավուշի Վերին Կարմիրաղբյուր գյուղից ոչ հեռու Սրանոցածոր կոչվող վայր կա, նույնանուն (Մրոնոցի ձոր) տեղանուն կա Գորիսից մոտ 8 կմ արևելք: Նախիջևանի Ագնաբերդ գյուղի թաղամասերից մեկը կոչվում էր Մրանոց, նույնանուն սար կա նաև գյուղի մերձակա քում:

Երբեմնի զարգացած ձիթհանության մասին են վեայում Հայաստանի ողջ տարածքում հանդիպող ձիթհանների ավերակներն ու ադացաքարերը, որոնց միջոցով որոշվում են նաև ձիթատու բույսերի մշակման հիմնական շրջանները:

Մեծ թվով ձիթհաններ են եղել հատկապես Գեղարքունիքում, Շիրակում, Սյունիքում և Վասպուրականում: «Յայս ընդարձակ գաւառի պատմեն լիներ բազմաց և վաղնջուց աւերակաց: Գեղատեղիք բաւական հինգ հարիւր տանց ընակչաց. ի մեջ մի ի նոսա հինգ ձիթհանք, գետնափոր մեծամեծ ամբարանոյք»:[57] Ձիթհանների բազմաթիվ ավերակներ են պահպանվել Սևանի ավագանում, այսպես՝ Կարճաղբյուր գյուղից արևելք, Տաշ-Ղափու հնավայրում երկու, Ղշլաղ գյուղի Մանիչարի դոլակներ հնավայրում՝ մեկ եկեղեցու, յոթ ձիթհանի և բնակելի տների հետքեր:[58] Շրջակա ավերակներում պահպանվել են 1231-ից մինչև 1705 թթ. պատկանող արձանագրություններ:[59] Հին բնակավայրերի և ձիթհանների ավերակներ կան Գեղարքունիքի մարզի Հայրավանք գյուղի մոտ: Գրավոր աղբյուրները և մեր հավաքած դաշտային ազգագրական նյութերը ցույց են տալիս, որ ձիթհանների ավերակներ կան Հայաստանի բոլոր մարզերում: Դրանց մի մասը մեզ է հասել միջնադարից, երբ ձիթհանությունը տնտեսության զարգացած ճյուղերից մեկն է եղել: Նման ենթադրության հիմք են հանդիսանում մատենագիր և վիմագիր աղբյուրներում վանքապատկան ձիթհանների մասին վկայող բազմաթիվ հիշատակությունները: Դրանք գտնվել են կամ վանքերին անմիջապես կից, ինչպես Էջմիածնում, Տաթևում, Հաղբատում, Օձունում, Խորանաշատում, Մարմաշենում, Վարագավանքում, Հառիճում, Թանահատում, Մշկավանքում, Գեղարդում, Խծկոնքում և այլն, այնպես էլ շրջակա և հեռավոր բնակավայրերում: Երնջակի սբ. Կարապետ վանքը Ապրակունիս գյուղում ունեցել է մեկ ձիթհան, Վանի Կտուց անապատին պատկանող ձիթհանը գտնվել է Մարմետ գյուղում:[60]

Ձիթհանները կառուցվել են վանքերի տարածքից դուրս, այնտեղ մարդկանց, բեռնակիր կենդանիների խճողում չառաջացնելու և բակը մաքուր պահելու նպատակով:[61]

1602թ. Փոքր Գրիգորիս կաթողիկոսը Ախթամարում «ձիթաղաց մի կորտէ շինեաց, յարևելից կուսէ հանդեպ Կարմիր եկեղեցւոյն զի փոքր ժամանակ բանաւ վասն այնորիկ, զի ձըմայ էր տեղն :ՌՕԱ: (1602թ.) ..»:[62]

Միջնադարում ձիթհանությունը արդեն վերածվել էր կազմակերպված շահութաբեր արտադրության: «Հայաստանի հովտներում և նախալեռնային վայրերում տեղադրված քաղաքներում շատ կային ձիթհաններ, յուղատու բույսերի՝ կտավատի, քունջութի սերմերից ձեթ հանելու համար: Դրանք պատկանում էին ֆեոդալներին, մեծատուններին, նաև վանքերին, ինչպես դա պարզ երևում է վիմական արձանագրություններից»:[63]

Միջնադարյան Հայաստանում, հատկապես Բագրատունյաց թագավորության շրջանում, տնտեսական կյանքը մեծ վերելք ապրեց: Այն իր արտահայտությունը գտավ տնտեսության գանազան ճյուղերի, այդ թվում նաև ձիթհանության ասպարեզում: Դրա վառ ապացույցն էր մայրաքաղաք Անին իր զարգացած արհեստավորական արդյունագործությամբ: Բազմահազարանոց քաղաքին մթերքներ էին մատակարարում շրջակա բազմաթիվ բնակավայրերն ու քաղաքի արվարձանները: Բուն

---

[55] *Մ. Բարխուդարյան*, նշվ. աշխ, էջ 379:
[56] *Կ. Գաբիկեան*, Բառգիրք, էջ 159:
[57] *Պ. Պետրոսյան*, Տեղագրութիւն Շիրակա, «Արարատ», 1872, 1, էջ 20-21:
[58] *ԱՀ*, գ. 19, 1910, էջ 10:
[59] *Դիվան*, հ. 4, էջ 109:
[60] ԱՀ, գ. 21, 1911, էջ 93:
[61] *Մ.Մ. Հասրաթյան*, նշվ. աշխ, էջ 142:
[62] *ՀՁՀ*, ժէ, հ. Ա, 1978, էջ 61:
[63] *Բ.Ն. Առաքելյան*, նշվ. աշխ, հ. 1, էջ 49:

քաղաքում և նրա արվարձաններում հայտնաբերվել է 20 ծիքիան:[64] Ահա թե ինչ է գրում պատմիչ Ավրահամ Կրետացին Անիի մասին. «Նոքա միշտ պարծենային վասն եկեղեցացն, և Աստուծոյ վերայ երախտիք համարէին, վասն :Ռ և Ա: (1001) եկեղեցի ունէին և ամեն եկեղեցւոյ՝ :Ա:. ծիքիանք և :Ա:. այգի յիշատակ եղեալ առ ի շէն մնալ եկեղեցացն»:[65]

Անցյալ դարի հեղինակներից մեկը գրում է. «Անւոյ ամէն մի եկեղեցւոյ կշտին կայ մի կամ աւելի ծիքահանք...»:[66] Այս առումով հետաքրքրական է ճանապարհորդ Գ. Երգնկյանցի Անիից ստացած տպավորությունը. «Ամրողջ քաղաքում աչքի են ընկնում իրանց այլածևությամբ ծիքիանքերը, որ նշմարելի է նրանց պատերն, քարերն և օջախներն. հաշուեցի, որ ռուն քաղաքումն 300 ծիքիանքի ավերակներ կան»:[67] Վերոհիշյալ տվյալները, խիստ չափազանցված լինելով հանդերձ, վեայում են ծիքիանության երրեմնի բարձը մակարդակը Անիում: Ընդ որում, Անիի ծիքանները իրենց ճարտարապետական և կառուցվածքային հորինվածքով գրեթե հասցված էին կատարելության: Ճարտարապետ Վ. Հարությունյանը գրում է. «Անիի ծիքահանքի բաղդատումը ուշ միջնադարին վերաբերող արտաղրական նույնանշանակ շենքերի հետ ի հայտ է բերում արտադրական պրոցեսների կազմակերպան որոշակի կայունություն, միայն այն տարբերությամբ, որ ուշ միջնադարյան ծիքիանները մեծամասամբ բաղկացած էին մի քանի սենյակներից, որոնցից յուրաքանչյուրում կազմակերպվում էր արտադրական առանձին պրոցես»:[68]

Որպես ծիքիանների տերեր և նվիրատուներ հանդես էին գալիս ոչ միայն իշխանական, այլև նորահաստատ առևտրավաշխառուական դասի ներկայացուցիչները. «Միանգամայն նոր և ֆեոդալական հասարակության գարգացման տեսակետից նշանակալից երևույթ էր այն, որ հոդեր, գյուղեր և քաղաքներ, անշարժ և շարժական գույք ունեցող անձերի թվում, սկսած 11-րդ դարից, հանդիպում են քաղաքային վերնախավի ներկայացուցիչները... Տիգրան Հոնենցը հսկայական կալվածքների ու գանձերի հետ, ամբողջ թաղամասի՝ տների, կուղպակների, փնդուկների, խանպարների, ջրադացների, ծիքիանների և այլ անշարժ գույքի սեփականատեր էր Անիում և այդ ամենը ձեռք էր բերել փոդով»:[69]

Երբ 1828թ. Հայաստանի արևելյան հատվածն անցավ Ռուսաստանի տիրապետության տակ, ըստ Ի. Շոպենի տվյալների, միայն Հայկական մարզում կար 285 ծիքիան, մոտ երեք

հ/հ	Մահալներ	գործող	ավերակ	ընդամենը
1.	Կըրխ- Բուլախ	2	15	17
2.	Գառնի - Բասար	-	1	1
3.	Վեդի - Բասար	-	3	3
4.	Սուրմալու	5	1	6
5.	Դարաքենդ- Փերչանիս	3	1	4
6.	Թալին	1	9	10
7.	Սեյիդլի - Ախսախլի	-	1	1
8.	Կարպի - Բասար	6	8	14
9.	Բաշ Արարան	3	24	27
10.	Դարաչիչակ	5	30	35
11.	Գյոկչայ	-	95	95
12.	Ալինջաչայ	1	3	4
13.	Նախիջևան	2	11	13
14.	Մալագիխաթուն	-	5	5
15.	Դարալագյազ	2	37	39
16.	Օրդուրատ	-	2	2
17.	Չանանար	-	1	1
18.	Բելավ	-	2	2
	Ընդամենը	35	260	285

[64] *Վ.Մ. Հարությունյան*, Անի քաղաքը, Եր., 1964, էջ 81:
[65] *Ավրահամ Կրետացւոյ* Պատմութիւն անցիցն իւրոյ եւ Նատր-Շահին ապարսից, Վաղարշապատ, 1870. էջ 104:
[66] *Հ. Կարապետ*, Ախալցխայից մինչև Անի, Փորձ, 8-9, էջ 104:
[67] *Գ. Երգնկյանց*, Արծագանք, 1887, էջ14:
[68] *Վ.Մ. Հարությունյան*, Անի, էջ 82:
[69] *Բ.Ն. Առաքելյան*. Նշվ. աշխ, հ.2, էջ 55:

անգամ ավելի, քան Վրաստանում և Ադրբեջանում միասին վերցրած: Պատերազմական դրությունն առաջ էր բերել տնտեսական անկայուն վիճակ, որի պատճառով տնտեսության բոլոր ճյուղերը անկում էին ապրել: Այդ իսկ պատճառով վերոհիշյալ 285 ձիթհանից աշխատում էր միայն 35-ը:[70] 19-րդ դարի 80-ական թվականներին ձիթհանությունը, նավթամթերքների մուտք գործելու պատճառով, սկսեց անկում ապրել: Նախիջևանի մասին հրատարակված տեղեկագրերից մեկում նշված է, որ անցյալում տնտեսության այդ ճյուղը, ըստ ձիթհանների ավերակների, խիստ տարածված է եղել:[71]

Հայկական մարզում ձիթհանների տարածվածությունը, ըստ մահայների, հետևյալն է.[72]

1868թ. Երևանի նահանգի 197 ձիթհաններում արտադրվել է 12500 փութ ձեթ:[73]

Եթե համեմատելու լինենք Երևանի նահանգի բնակչության քանակը (մոտ 450000)[74] և ձեթի արտադրության չափը, ապա կտեսնենք, որ մեկ շնչին միջին հաշվով ընկել է մոտ 5լ - ձեթ:

1874-1876 թվականներին միայն Նոր Բայազետի գավառում գործել է 70 ձիթհան, որոնցից երկուսը՝ գավառի կենտրոնում: Դբանցում աշխատող բանվորների թիվը հասնում էր 350-ի:[75]

1886թ. Երևանի նահանգում գործում էր 227 ձիթհան, որոնք ըստ գավառների բաշխված էին հետևյալ կերպ. ամենից շատ՝ 64 և 62, կային Նոր Բայազետի և Ալեքսանդրապոլի գավառներում: Գեղարքունիքի Սարուխան գյուղում դարասկզբին եղել է ինը ձիթհան:[76] Սրանց հաջորդում էին Էջմիածնի գավառը՝ 57, Նախիջևանի գավառը,՝ 24 Սուրմալուն՝ 13, Երևանը՝ հինգ և Շարուր-Դաղալյագագը՝ երկու:[77] Մեր մոտավոր հաշվումներով, Ելիզավետպոլի և Թիֆլիսի նահանգների հայկական բնակավայրերում զործել է ևս 200 ձիթհան: Ելիզավետպոլի նահանգում ձիթհանությունն անցյալ դարի սկզբին առավելապես զարգացած էր Զանգեզուրի և Նուխու գավառներում. 1905թ. դրանցում գործում էր համապատասխանաբար 24 և 16 ձիթհան: Այս թվերը իրական պատկերը չեն արտահայտում, քանի որ ընդգրկում են միայն տվյալ տարվա ընթացքում աշխատած արտադրական կառույցները: Այսպես, 1907թ. տվյալներով նույն գավառներում գործել է 15 և 10 ձիթհան:

19-րդ դարի վերջում միայն Ալեքսանդրապոլում, տարբեր տարիների, գործել է 6-10 ձիթհան: Դրանց մեծ մասը գտնվում էր հողագործների «Ձորի բողազ» թաղամասում:[78]

Նկարագրելով Մանազկերտ քաղաքը, Մ. Միրախորյանը գրում է. «Դարձնենք հայացքնիս մեր շուրջը, ուր պիտի տեսնենք 8-10 ձիթհաններու և ջրշեղջներու (ջրվեժ-Հ. Ս.) պարիսպներ..»:[79]

Արցախում, Ուտիքում, ինչպես և հայկական մյուս ձիթագործական շրջաններում, պահպանվել են մի քանի տասնյակ ձիթհանների ավերակներ, որոնցից մեկը գտնվում է Մարտակերտի շրջանի Մաղավուզ գյուղի տարածքում:[80] Ձիթհաններ են եղել նաև Գետաշեն, Բանանց, Վերին Շեն, Գյուլիստան, Զագլիկ և այլ գյուղերում: Գետաշենի ձիթհաններից մեկը տեղադրած էր գյուղի եկեղեցում:[81]

Ըստ անցյալ դարի ուսումնասիրող Ն. Աբելովի՝ Ելիգավետպոլի նահանգում 19-րդ դարի կեսերին գործել է 19 ձիթհան, ընդ որում՝ միայն քրիստոնեական բնակավայրերում:[82]

Ռուսական բնակավայրերում առավելապես մշակվել է կտավատ և կանեփ, իսկ հայկականներում՝ հլածուկ: Վերոհիշյալ հեղինակի նկարագրած ձիթհանների մի մասն աշխատել է ջրի ուժով: Դաշտային ազգագրական հետազոտությունների ընթացքում նման փաստ արձանագրել ենք միայն Բանանց գյուղում: Հայ իրականության մեջ սա մեզ հայտնի մի-

---

[70] *И. Шопен*, ук. соч.,с. 862.
[71] Сборник сведений о Кавказе, т. 7, Тифлись, 1888, с. 235.
[72] *И. Шопен*, ук. соч., с. 862.
[73] Сборник статистических сведений о Кавказе, т. 1, отд. 2, Тифлись, 1869, с. 116.
[74] *Հ.Գ. Սարգսյան*. Երևանի նահանգի բնակչությունը 50 տարում, - Բանբեր Երևանի համալսարանի, 1990, 1, էջ 117:
[75] *С.П. Кузьмин*, ук. соч., с. 88 – 89.
[76] *ԴԱՆ*, 1972, էջ 35:
[77] *ՀՊՊՍ*, ֆոնդ 125, g. 1, գ. 34:
[78] *Կ.Վ.Սեղբոսյան*, Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում. - ՀԱԲ, h. 6, Եր., 1974, էջ 177:
[79] *Մ. Միրախորեան*, նշվ. աշխ, h. Բ, էջ 52:
[80] *Ա.Բ. Դուլյան, Ռ. Ս. Արգարյան*, Արցախի Քաղաքատեղ երդավանը, ՊԲՀ, 1, 1988, էջ 150:
[81] ԴԱՆ, 1985, էջ 23:
[82] *Н.А. Абелов*, Экономический быт гос. крестьян Елисаветпольского уезда, Елисаветпольской губ, МИЭБГКЗК, т. 7, 1887, с. 98-99.

ակ ղեպքն է: Մեր կարծիքով, այս սովորությունը փոխառնվել է գերմանացի վերաբնակներից: Նման մի կառույց վկայված է Դիլիջանում, համանուն գետակի վրա, որը մեկ ջրադացի ջրով ցորեն է աղացել, բրինձ մաքրել և ձիթատու հատիկներ վերամշակել:[83]

Երևանի նահանգում ձիթհանները քանակապես, արտադրական հաստատություններից զիջում էին միայն ջրաղացներին, որոնց թիվը 1896թ. հասնում էր 2214-ի:[84] Դրանց դրամական եկամուտները հետևյալ հարաբերակցությունն ունեին. ջրաղացներ՝ 368910 ռ. և ձիթհաններ՝ 34004 ռ.:

Հայաստանում բոլոր ձեռնարկությունների ընդհանուր քանակը հասնում էր 4117-ի, որի 45% կազմում էին ջրաղացներն ու ձիթհանները: Ողջ Սնդրկովկասի 10533 ձեռնարկությունների 40 % գտնվում էր Հայաստանում:[85] 1889թ. Երևանի նահանգում աշխատել է 201,[86] իսկ 1900թ.՝ 196 ձիթհան, որոնք ըստ գավառների բաշխված էին հետևյալ կերպ.[87]

Նոր Բայազետ- 48

Էջմիածին - 33

Ալեքսանդրապոլ - 68

Նախիջևան - 25, որից 5- Ապրակունիս և 3-ը Նորաշեն գյուղերում

Երևան -7

Սուրմալու - 14

Շարուր-Դարալագյազ -19:

Ձիթհանները կիսատնայնագործական ձեռնարկություններ էին, որոնք հիմնականում ապահովում էին տեղի բնակչության պահանջները: Դարասկզբին Հայաստանում ձեթի տարեկան արտադրությունը հասնում էր 80-90 հազար փթի, որը սպառվում էր ներքին շուկայում:[88]

Նախալեռնային և լեռնային շրջաններից պատրաստի ձեթը վաճառքի էր տարվում Արարատյան դաշտ և այլ ցածրադիր շրջաններ, ուր ձիթհանությունը սակավ զարգացած էր: Այն առավելապես փոխանակվում էր միգերի, բրնձի, խմիչքների և այլ մթերքների հետ: Որոշ տարիներ քնջութի բարձրորակ ձեթը (շիրրախտ) արտահանվում էր Թիֆլիս:

Ձիթհանության հարուստ ավանդույթներ է ունեցել Զավախքը: Որոշ բնակավայրեր ունեցել են մեկից ավելի, Կարծախը՝ երեք, իսկ Կուրտիկամը՝ հինգ ձիթհան: Զավախքը խիստ զարգացած երկրագործական մշակույթ ուներ, հարուստ էր ձիթատու բույսերով և ձիթհաններով:[89] 19-րդ դարի վերջերին միայն Ախալքալակի գավառում գործել է 35 ձիթհան:[90] Ըստ անցյալ դարի մի թղթակցության՝ ձիթհանությունը եղել է Զավախքի հայության հիմնական տնտեսական զբաղմունքներից մեկը. «Այս երկրի տեղի դրությունը ընդարձակ մի վայր է: Սորա լայնատարած և արդիւնաբեր դաշտորայքը, որ ծածկուած են արգաւանդ սև հողով, բուսուցանում են առատութեամբ ցորեան, գարի, հաճար, երեք տեսակ վուշ (կտավատ), ոսպն և այլն»:[91]

Զավախքի ձիթհանների մասին անցյալ դարի հեղինակներից մեկը գրում է. «Ձիթհանը մի ահագին, վոթխարի շինություն է, պետք է նայել և մտածել, թե ինչպես այս խավարի մեջ նստող ժողովուրդը կարողանում է այդ կառուցել»:[92]

Զավախքի հայ բնակչության հիմնական մասը վերաբնակվել է Բարձր Հայքից: Բնականաբար, նրանք բնակության նոր վայրում, բնակլիմայական համանման պայմաններում շարունակել են իրենց կենցաղավարության ավանդական ձևերը: Անցյալ դարի ուսումնասիրող Խ. Վերմիշևի կարծիքով, ձիթհանության մշակույթը Զավախք մուտք է գործել հայերի միջոցով:[93]

Վրացի ագրագրագետ Լ. Մոլոդինին մերժում է այս տեսակետը՝ հենվելով «Գուրջիստանի վիլայեթի մեծ դավթարը» գրքի այն տեղեկության վրա, թե 16-րդ դարում Զավախքի նույն տարածքից որոշակի քանակության ձեթի հարկ է գանձվել:[94] Նա վրացական մի քանի գյուղերում տեսած ձիթհանների ադացա-

---

[83] *Մ. Մնբատեանց*, նշվ. աշխ, էջ 93:
[84] Обзор Эриванской губ. за 1898 г., с. 8.
[85] *Հ. Թումանյան*, Հայաստանում կապիտալիզմի զարգացման մի քանի առանձնահատկությունների մասին, ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, 2, 1947, էջ 27:
[86] Բանբեր Հայաստանի արխիվների, 1, 1984, էջ 102:
[87] *ՀՊՊԱ*, ֆոնդ 94, ց. 5, գ. 1277, մաս 1:
[88] *Պ. Ոսկերչյան*, Սովետական Հայաստանի արդյունաբերությունը, 1925-1940, Եր., 1966, էջ 9:
[89] *ՀՀՀ*, ժէ, հ. Ա, 1978, էջ 315:
[90] *Обзор* Тифлисской губ. за 1897 г., Тифлисъ, 1898, ведомость 2.
[91] *Մշակ*, 15, 1874, էջ 2:
[92] *Հ. Սալխաս*, Զավախք, Նոր-Դար, 1893, 198:
[93] *Х.А. Вермишев*, ук. соч., с. 202-203.
[94] *Л.Ն. Մոլոդինի*, նշվ. աշխ, էջ 367:

քարերի հիման վրա եկել է հետևյալ եզրակացության. «Վրացական գյուղերում պահպանված ձիթհանների մնացորդներն այստեղ ձիթհանության երբեմնի գոյությունը հաստատող նյութական փաստեր են, իսկ հայկական գյուղերում գործող ձիթհանները՝ վոացական ավանդույթի շարունակությունն են ներկայացնում»:[95] Եվ դա այն դեպքում, երբ նույն էջում նա հավաստում է, որ ձիթհաններ գործում են միայն հայկական գյուղերում:

Վրաստանում էլ կտավատի մշակությունը հին պատմություն ունի, սակայն այնտեղ տարածված է եղել այդ բույսի մի տեսակ, որ գիտությանը հայտնի է «կոլխական կտավատ» անվամբ: Այն ոչ թե ձիթատու, այլ թելատու է, Գուրիա-Սամգրելոյում մշակվել է թելանյութ ստանալու համար: Հերոդոտը կոլխերի մասին մի առասպելախառն վկայություն ունի, ըստ որի նրանք ծագում են Եգիպտոսից: Որպես ապացույց պատմիչը բերում է այն փաստը, որ եգիպտացիներն ու կոլխերը մեծ քանակությամբ վուշ են մշակել և դրանից պատրաստել ընտիր թել:[96]

Ձիթհանությունը Ջավախքի հայ բնակչության տնտեսության հիմնական ճյուղերից էր և մուտք է գործել հայերի միջոցով և, քանի որ Վրաստանի մնացած շրջաններում այն չի զարգացել կամ իսպառ բացակայում է, թույլ է տալիս ենթադրել, որ այս ընագավառում հայերը կարևոր դեր են խաղացել:

Միայն 1828թ. հետո է, որ Հայաստանի արևելյան հատվածում կյանքը սկսեց կայունանալ: Այժմյան Հայաստանի բնակչության մի զգալի մասը ներգաղթել է երկրի արևմտյան հատվածից և Իրանից: Ազգագրական նյութը ցույց է տալիս, որ նոր բնակավայրերում էլ շարունակվել են կենցաղավարության ավանդական ձևերը: Նոր բնակավայրերում շարունակելով կյանքը, օգտագործել են իրենցից առաջ տեղում ապրած բնակչության ավերված բնակատեղիներում եղած արտադրական կառույցները, այդ թվում նաև՝ ձիթհանները: Դրանց ամենակարևոր և թանկ մասը աղացքարն էր, որի պատրաստումն ու տեղափոխումը կապված էր մեծ դժվարությունների հետ: Բնակության նոր վայրերում, անկասկած, առաջին հերթին օգտագործվել են աղացքարերը:

Մեր հավաքած դաշտային ազգագրական նյութերը վկայում են բազմաթիվ դեպքեր, երբ հին գյուղատեղերից աղացքարեր են տեղափոխել կառուցվող ձիթհանների համար:

1913թ. Անիում պեղված ձիթհաններից մեկի աղացքարը չի հայտնաբերվել:[97] Հավանաբար այն տեղափոխվել է նոր կառուցվող ձիթհանում օգտագործելու համար:

19-րդ դարի կեսերին Տավուշի Հաղարծին գյուղի հասարակությունը դիմել է Գոշ գյուղի համայնքին, տեղափոխելու Գոշավանքի ավերված ձիթհանի աղացքարը: Գոշի բնակչությունը այն զիջել է, կառուցվելիք ձիթհանից անվարձ օգտվելու պայմանով:[98]

Անցած դարի վերջին Շիրակի Հառիճ գյուղի բնակիչներից մեկը նախաձեռնեց ձիթհան կառուցել: Հանուն գյուղի բնակչության շահերի, Հառիճավանքի վանահայրը թույլ է տվել օգտագործել վանքի ավերված ձիթհանի աղացքարը: Սակայն այն տեղափոխելու ժամանակ, ինչ-ինչ պատճառներով, վանահայրն արգելում է քարը տանել և նզովում է հակառակվողների այդ ձեռնարկումը: Կես ճանապարհին աղացքարը կոտրվել է:[99]

Արագածոտնի Կարրի գյուղի ձիթհաններից մեկի աղացքարը բերվել է մոտ 3կմ հեռվից, Քասախի ձորից: Դա հավանաբար Աղմոսավանքին պատկանած Սերկևիլի ձիթհանի քարն է եղել:[100]

1930-ական թվականներին Շիրակի Վահրամաբերդ գյուղում կառուցված ձիթհանի քարը բերվել է Մարմաշենի վանքի մոտից: Տավուշի Բերդ ավանի ձիթհաններից մեկի աղացքարը բերվել է գյուղից մոտ 4կմ հեռու գտնվող մի գյուղատեղից,[101] իսկ Տավուշի Արծվարերդ գյուղինը՝ Զորաթան գյուղի տարածքից:[102] Վայոց ձորի Հերհեր գյուղի ձիթհանի քարը բերվել է սբ. Ավոն եկեղեցու մոտից:[103]

Երբեմն որպես ձիթհան վերակառուցվել են

---

[95] *Անդ*, էջ 365:
[96] *Ламберти*, Описание Колхиды, СМОМПК, т. 43, ч. 1, Тифлисъ, 1913, с. 4.

[97] *Н.Я. Марр*, Ани, А-М., 1934, с. 117.
[98] *ԴԱՆ*, 1979, էջ 50:
[99] *ԴԱՆ*, 1978, էջ 54
[100] *Զամբռ*, էջ 141:
[101] *ԴԱՆ*, 1982, էջ 61:
[102] *ԴԱՆ*, 1980, էջ 11-12:
[103] *ԴԱՆ*, 1998, էջ 9:

նախկինում այլ նպատակներով կառուցված շինություններ.Հաղբատում՝ վանքի սեղանատունը,[104] Գետաշենում՝ գյուղի եկեղեցին, Մարտունուց Վայոց ձոր տանող ճանապարհին, Ադիաման գետի աջ ափին՝ իջևանատունը:[105]

Ձիթհանների տեսակներն ու կառուցվածքը

Ըստ հումքի և դրա վերամշակման առանձնահատկությունների՝ հայկական ձիթհանները եղել են երկու տեսակ: Առավել տարածված տեսակը զանազան խոսվածքներում հայտնի է ձիթհանք, ձիթահանք, ձիթահան, ձիթխաց, ձիթղաց,[106] ձիթհաց,[107] ձիթահաց,[108] ձիթխատ,[109] ձիթիանք, ծիթիհանք, ձիթի հանք,[110] ձիթիեանք,[111] սրանոց,[112] ասարխանե և այլ անվանումներով: Երբեմն այս բառաձևերը արտահայտել են այլ իմաստ. այսպես՝ Մոկսում որոշակիորեն տարբերակվել են ձիթխաց և ձիթհանք բառերը, որտեղ ձիթխացը ձավաթ և կորեկ կեղևահան անելու և թթի չիր ծեծելու դինգ է եղել:[113] Հ. Օրբելին Մոկսում հիշատակում է ձիթհանի մի տարատեսակ, որի ադացաքարի դիրքի որոշակի փոփոխության դեպքում կարող էր կատաբել նաև դինգի դեր:[114] Հնարավոր է, որ այսպես է եղել նաև հյարբերդում, քանի որ այնտեղ ձիթհանի կալը կոչվել է տինգ:[115]

Լեզվագրական իրականությունից հայտնի է, որ ձիթհանի վերոհիշյալ տեսակը տարածված է եղել պատմական Հայաստանի շատ գավառներում և հարևան երկրների հատկապես հայաբնակ վայրերում (տախտակ II, III, IV, VI, VII): Այն նախատեսվել է կտավատ, սոռեկ, հլածուկ, աճար ե ընկույզ վերամշակելու համար: Արևելյան Հայաստանում, վերոհիշյալ բույսերի մշակման շրջաններին համապատասխան, դրանք առավելապես տարածված են եղել Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնում, Այունիքում և այլուր:[116] Հայաստանում գերակշռել են միասրահ ձիթհանները, որտեղ աշխատանքային ողջ գործընթացը կատարվել է նույն ծածկո տակ տեղադրված մի մեծ սենյակում, որն ունենում էր 80-200 քմ մակերես: Թալինի ձիթհանն ունեցել է 175 քմ մակերես:[117] Միայն Սյունիքում և Արցախում է, որ ձիթհանը բաժանվել է երկու սրահի, որոնք միանում էին ներքին դռնով: Սյունիքի Տեղ, Խնածախ, Խոգնավար, Խնձորեսկ գյուղերի ձիթհանների մի զգալի մասը ժայռափոր են եղել, կառուցված քերծերի մեջ: Մինչև մեր դարի 70-ական թվականների սկիզբը դրանցից բարվոք վոճակում պահպանվում էր միայն Տեղ գյուղի Քոլունց ձիթհանը (սրանոց) (տախտակ I, VIII, 2): Արտաքինից, ձորալանջի թեքության վոա երևում էր միայն ձիթհանի մուտքը և լուսամուտի դեր կատարող մի անցք: Բնական միջնորմով, որում դուռ էր բացված, ձիթհանի երկու արտադրամասերը բաժանված էին իրարից: Կալատանը կից կար 12 քմ մակերեսով մի սենյակ,որը բանվորների հանգստի տեղն ու ձեթի զտման գամբյուղների (տեղի բարբառում՝՝ գամբալ) պահեստն էր: Այն կոչվում էր գամբալատուն:[118]

Գորիսի Սիբումենց ձիթհանը կառուցված էր քերծին կից, որպեսզի բնական ժայռը օգտագործվեր որպես բեռ՝ մամլիչի ճնշմանը հակակշիռ: Այն բաղկացած էր չորս սենյակից. կալատուն, գերանատուն, գոմ (բլանուց) և ճրպտատուն (գամբյուղների պահեստ՝ ճիպոտ բառից, որից գործում էին գամբյուղները):

Անկախ այն բանից, ձիթհանը միասրահ էր, թե երկսրահ, դրանում տարբերակվում էին երկու հիմնական և մի քանի օժանդակ արտադրամասեր: Այն մի ամբողջական համալիր կառույց էր, որ գտնվում էր բնակարանից մեկուսի, բնակավայրերի բանուկ հատվածներում: Մեզ հայտնի միակ դեպքը, երբ այն կազմել է բնակելի համալիրի մի մասը, Խար-

---

[104] *Վ.Մ. Հարությունյան*, Հայ ժողովրդի ճարտարապետական ժառանգությունը, Եր., 1985, էջ 26:
[105] *ԱՀ*, գ. 18, 1908, էջ 153:
[106] *Հր. Աճառյան*, ԳԲ, էջ 689:
[107] *Գ. Սրվանձտյանց*, Երկեր, հ. 1, էջ 341:
[108] *ՀՀՀ*. ժԵ, հ. Գ, էջ 11:
[109] *Ե. Տեր-Մկրտչյան*, Վանեցոնց հարսանիքը, ՀԱԲ, հ. 1, 1970, էջ 196:
[110] *Կ.Գ. Դաֆթարյան*, Սանահին, էջ 138:
[111] *Բարջանց*, էջ 44:
[112] *Հր. Աճառյան*, ԳԲ, էջ 986, *Ստ. Մալխասյանց*, ՀԲԲ, հ. 4, էջ139:
[113] *Ալ.Դարբինյան* Սոկսի ազգագրական և բանահյուսական նյութերը (ձեռագիր), ՀԱԻ ԱԲԱ, մաս 7, էջ 12-13:
[114] *Ի. Ա. Օրբելի*, Մոկս, с. 24, 37.
[115] *Բարջանց*, էջ 33:

[116] *С. Обосян*, Армянские народные маслобойни, Всесоюзная сессия по итогам этнографических исследований 1980-1981 гг., тезисы, Нальчик, 1982, с. 212-213.
[117] *Հ.Խ. Խալափախչյան*, նշվ. աշխ., էջ 45-46:
[118] *С. Обосян*, Маслоделие в Сюнике, Материалы республиканской научной конференции молодых научных работников по гуманитарным наукам, тезисы, Ер., 1972, с. 95-97.

բերդի Բարջանճ գյուղում է հիշատակվում, որտեղ եղել է ութ ծիթհան:[119]

Ձիթհանները արտաքին տեսքով գրեթե չէին տարբերվում բնակելի շենքերից. «Հատակագծման ու ներքին կազմակերպման տեսակետից համապատասխանելով կատարվող արտադրական պրոցեսներին, այս կառուցվածքների ճարտարապետությունը պարզ ու գործնական է, որպիսի հատկանիշները բխում են իրենց բնույթից»:[120] Միակ տարբերությունը բնակելի շենքերից, դրա մի անկյունում վեր բարձրացող աշտարակաձև հատվածն էր, որտեղ գտնվում էր մամլիչ հարմարանքի պտուտակը:

Ձիթհանի մասին Շիրակից հայտնի է մի հանելուկ.[121]

«Ալաճա (կարմիր ու թուխ) միգար
Բանձր եկեղեցի,
Խորաններ չունի,
Եռիկ աղբյուր ունի»:

Ձիթհանը, ինչպես և մնացած արտադրական շենքերը կառուցվում էին հայկական ավանդական շինարվեստին համապատասխան: Հիմնական շինանյութը քարն էր, կավի ու հողի շաղախով: Արարատյան դաշտում, տեղի ավանդույթների համաձայն պատերը շարում էին նաև հում կամ թրծած աղյուսից:

Գորիսում, Տաթևում (տախտակ V) և Ուտիքի Գետաշեն գյուղում պահպանվել են ճարտարապետական առումով մեզ հայտնի ամենակատարյալ ծիթհանների շենքերը: Դրանք երկսրահ թաղակապ շինություններ են, կրաշաղախով, սրբասաղ քարերով շարված: Ձիթհանի ճարտարապետական և կառուցվածքային հորինվածքի մասին ճարտարապետ Մ. Հասրաթյանը գրում է. «Տաթևի վանքի ծիթհանը իր տարածական-ծավալային լուծման, ծածկի տարբեր կոնստրուկցիաների սրամիտ զուգակցման, ռացիոնալ հատակագծի շնորհիվ համարվում է հայ ճարտարապետության տվյալ տիպի կառուցվածքներից ամենաաբժեքավորը և հետաքրքրականը»:[122]

Ձիթհանի պատերի բարձրությունը հասնում էր երեք, իսկ աշտարակաձև մասում՝ մինչև չորս մետրի: Տափակ հոդածածկ կտուրը նստում էր սյուների վրա:

Առաջին արտադրական սրահը կոչվում էր կալատուն կամ կոսլատուն, իսկ երկրորդը՝ գերանատուն կամ ծիթատուն: Վերջինս միջնադարում հայտնի է եղել նաև դրքատուն ձևով:[123] Կալատան անվանումն արդեն հուշում է այս արտադրամասում կատարվող աշխատանքների բնույթը: Այստեղ տեղադրված էին կալը՝ աղացաքարով, բովը և ջուր տաքացնելու օջախը: Բովը սովորաբար կառուցվել է կալատան վերին պատի տակ, մուտքի դիմաց: Կայն ծառայում էր հումքը բովելու համար: Կայն շարվում էր քարից, ուներ մոտ երկու մետր երկարություն,[124] 1,2-1,5մ լայնություն և 1-1,3մ բարձրություն: Բովի վերին մակերեսը, որ կոչվում էր բովտուն, մոտ 30սմ խորության ավազան էր, որի հատակը մեկ կամ երկու որձաքարե սալաքարերից էր շինվում: Տաթևի վանքի ծիթհանի բովի հարթակը մի ամբողջական սալաքար է, վերցված վանական համալիրի վաղ շրջանի շինություններից մեկից: Բովի կրողային պատի քանդված մասից երևում է քարի վրա փորագրված արձանագրության մի մասը:[125] Բովատան երկու կրողմերի մեծ քարերը կոչվում էին բովքաբ կամ չաքուրկա:[126] Բովի այս տեսակը բնորոշ էր Հայաստանի գրեթե բոլոր շրջաններին: Սյունիքում այն հայտնի էր պով, Շիրակում՝ ֆուռ ձևերով:[127] Բացառություն են կազմում, թերևս - Տավուշը և Ուտիքը, ուր բովը այլ ձևով էր կառուցվում: Տավուշի մարզի Խաչքառակ գյուղում ծիթհանի բովը, որ այստեղ կոչվում էր փուռ, էապես տարբերվել է մեզ հայտնի նմանատիպ արտադրամասերից: Այն հատակից մեկ մետր բարձր, մոտ 1,5մ տրամագծով շրջանաձև կառույց էր: Բովի հարթակը շինելու համար, շրջանի կենտրոնում, գետնի մեջ, մոտ 5սմ հաստության երկաթե ցից էին տնկում: Սրա վերին մասում արված փոսորակում մի քանի սանտիմետր հաստությամբ և մոտ 40սմ տրամագծով, հորիզոնական դիրքով ամրացվում էր երկաթե սկավառակ: Այն որպես հենաբան էր ծառայում բովի հատակը

[119] *Բարջանճ*, էջ 44:
[120] *Վ.Մ. Հարությունյան*, ճարտ.,էջ 25:
[121] *Ս.Բ. Հարությունյան*, նշվ. աշխ., էջ 176:
[122] *Մ.Ս. Հասրաթյան*, նշվ. աշխ., էջ 142:
[123] *Զաքարիա Քանաքեռցի*, էջ 28:
[124] *Ս. Ամատունի*. ԲԲ, էջ 124:
[125] *ԴԱՄ*, 1976, էջ 22:
[126] *Ստ. Մալխասյանց*, ՀԲԲ, հ. 1, էջ 387:

տափակ սալաքարերի համար, որոնք մի ծայրով նստում էին փուռն եզրապատին, իսկ մյուսով՝ սկավառակի վիա: Այդ քարերի հաստությունը հասնում էր 25-30սմ: Հարթակեց բովվող հումքը չթափվելու համար, եզրապատերը մոտ 25սմ բարձրացնում էին:[128]

Բովի ճակատային մասի կենտրոնում հնոցն էր: Այն ջեռուցվում էր փայտով,[129] ծիթաբույսերի չորացած ցողուններով,[130] քակորով և գագ կոչվող բույսի ցողուններով:[131] Բովի տակ ջերմությունը ավելի երկար պահպանելու նպատակով, կոակլարանի քարե կափարիչը դնում և ճեղքերը փակում էին գոմաղբով կամ կավով: Նույն նպատակով ծխնելույզը փակում էին ծխնաքարով:[132]

Հնոցը ջեռուցելուց մեկ ժամ անց ծիթհանի վարպետի հրահանգով: բանվորները հումքը լցնում էին բովի վրա և հավասար կերպով սփռում: Միաժամանակ բովում էին մինչև 15 փութ հատիկ: Հումքը մոտ վեց ժամ բովվում էր, որի ընթացքում այն 5-6 անգամ փայտե թիակներով խառնում էին: Այդ ընթացքում հնոցի մեջ վառելանյութ չէին ավելացնում: Խոշոր ծիթհաններում օրվա ընթացքում այն ջեռուցում էին երկու անգամ՝ առավոտյան և երեկոյան:

Հումքի բովման ամենանախնական ձևը մեզ հայտնի է Այունիքից, որտեղ այն պահպանվել էր մինչև 20-րդ դարի 40-ական թվականները: Շիկահող, Շիշկեբտ, Չափնի և Ճավ գյուղերում ծիթատու բույսերի հատիկները բովել են կոակի մեջ շիկացրած բռնցքաչափ գետաքարերի միջոցով: Հատուկ շինված հարթակում հումքը լցրել են այդ քարերի վրա և թիակներով խառնել, ընթացքում փոխելով քարերը:[133]

Բոված հումքը լցնում էին բովի կողքին շինված քարե կամ փայտե ավազանի մեջ, որն Արարատյան դաշտում կոչվում էր հովտուն, Շիրակում՝ փոխնոդտուն,[134] իսկ Այունիքում՝ կտավատուն:[135]

Կալը գտնվում էր սրահի կենտրոնական մասում: Գեղարքունիքում այն կոչվում էր քառակ:[136] Այն մոտ 30սմ խորության տեփուրաձև գոգավորություն էր, որի տրամագիծը հիմքի մասում 1,5-,8մ էր, իսկ եզրամասում լայնանում էր մինչև 2,3-3 մետրի: Աղացաքարերը երկեւսն էին, որոնցից մեկը՝ վարինը, հորիզոնական ղիրքով թաղված էր հողում: Տավուշում այն կոչվում էր օջախ,[137] իսկ Գետաշենում՝ սեղան:[138] Նրա վերին մակերեսը կալի հատակն էր հանդիսանում: Կալի եզրերը շարվում էին առանձին քարերից կամ, սակավադեպ պատրաստվում տախտակներից, որը Տավուշում կոչվում էր խեմք:[139] Վարի քարի կենտրոնում արված մոտ 20սմ տրամագծով անցքում ուղղահայաց ղիրքով ամրացվում էր 0,8-1մ երկարությամբ կաղնեփայտ, որը Այունիքում կոչվում էր ցից,[140] Շիրակում՝ ծառ,[141] Արցախում՝ սուն,[142] Վասպուրականում՝ կալի սուն և այլն: Որպես լրացուցիչ ամրություն, կաղնեփայտի առանցքով անց էր կացվում երկաթե միջուկ. որը հայերենի տարբեր խոսվածքներում, կոչվում էր լեղ, իլիկ, մագի, շվոլ և այլն:[143] Ցիցը ծառայում էր աղացաքարը (կալքար) կալի մեջ ուղղահայաց դիրքով կանգնեցնելու համար և նրա պտտման առանցքն էր հանդիսանում: Հայոց մեջ կալքարը հայտնի է նաև ծեծքար (Շիրակ),[144] քարաղ (Ուտիք),[145] ջոթաքաբ (Սասուն, Լոռի)[146] անվանումներով: Աղացաքարի մասին Հակոբ Դրիմեցին գրել է. «Երկինք որպես ծիթհանաց քար կողմաւոր գլորի: Իբրև ծիթհանուց կողմաւոր շրջաբերի»:[147]

Աղացաքարերը բազալտից կամ կարծր ավազաքարից էին (տախտակ IX 1, 2): Աղալու ժամանակ ճնշումն ավելի մեծացնելու, կայունացնելու ու պտտման ժամանակ այն կողային տատանումներից ապահովելու համար

---

[127] *ԴԱՆ*, 1971, էջ 32, 1976, էջ 29, 1982, էջ 37:
[128] *ԴԱՆ*, 1979, էջ 36:
[129] *ԴԱՆ*, 1982, էջ 19, 1986, էջ 51:
[130] *ԴԱՆ*, 1976 էջ 21, 1979, էջ 36, *Լ. Ն. Սոլոդինի*, նշվ. աշխ., էջ 364:
[131] *ԴԱՆ*, 1971, էջ 46, 1979, էջ 51:
[132] *ԴԱՆ*, 1971, էջ 39:
[133] *ԴԱՆ*, 1976, էջ 4:
[134] *Ս. Ամատունի*, ԲԲ, էջ 655:
[135] *ԴԱՆ*, 1971, էջ 33:
[136] *Դ. Կարոլյան, Ս. Հորոյան*, Գեղհովիտի ծիթհանը, Եր., 1995, էջ 88:
[137] *ԴԱՆ*, 1982, էջ 34:
[138] *Ф. Джебранов*, ук. соч., с. 77.
[139] *ԴԱՆ*, 1980, էջ 23:
[140] *ԴԱՆ*, 1971, էջ 24:
[141] *ԴԱՆ*, 1976, էջ 17:
[142] *Ф. Джебранов*, ук. соч., с. 77.
[143] *ԴԱՆ*, 1971, էջ 26, 1973, էջ 44, 1982, էջ 27:
[144] Ս. Ամատունի, ԲԲ, էջ 306:
[145] *Ф. Джебранов*, ук. соч., с. 78.
[146] *Գ. Կարախանյան*, նշվ. աշխ., էջ 253:
[147] *ՆՀԲ*, հ. Բ, էջ 157:

քարի արտաքին տրամագիծը ներքինից մոտ 10սմ ավելի էին անում, դրանով իսկ քարին թեքություն տալով դեպի ցիցը:

Մոկսում մինչև անցյալ դարի վերջերը անիվային փոխադրամիջոցներ չեն եղել, բնակչության մի մասը անիվի մասին պատկերացում էր կազմում ձիթհանի աղացաքարի միջոցով:[148]

Հայաստանում կտավատ վերամշակող ձիթհանների վերին աղացաքարերը ունեցել են ուղղահայաց դիրք: Բացառություն է կազմում միայն անցյալ դարի առաջ ուսումնասիրողներից մեկի վկայությունը, ըստ որի՝ Կարսի մարզում դրանք եղել են հորիզոնական:[149] Մեր կարծիքով, հեղինակը շփոթել է, կամ տեսել քնջութ վերամշակող ձիթհան:

Վայրը	Տրամագիծ մ	Բարձրություն մ	Ծավալ խ.մ.	Կշիռ տ.
Երևան	1,55	0,38	0.85	2.0
Մեծ Մանթաշ	1.90	0.40	1.13	2.8
Գեղհովիտ	1.82	0.46	1.07	2.6
Սևանի եկեղեցի	1.72	0.43	1.02	2.4
Ջորագյուղ	1.70	0.44	1.02	2.4
Արծվաշեն	1.60	0.48	0.96	2.3
Հնաբերդ	1.70	0.50	1.13	2.8
Կարբի	1.60	0.42	0.84	2.1
Օհանավան	1.50	0.46	0.81	2.0
Ծիլքար	1.65	0.42	0.95	2.3
Անբերդ	1.60	0.43	0.84	2.1
Ապարան	1.65	0.43	0.88	2.2
Գեղարդ	1.70	0.44	1.02	2.4
Տեղ	1.75	0.45	1.00	2.5
Տաթև	1.62	0.44	0.88	2.1
Ազատաշեն	2.17	0.50	1.74	4.4
Բերդ	1.40	0.48	0.73	1.8
Նավուր	1.45	0.46	0.75	1.8
Նավուր	1.55	-	-	-
Վ. Կարմիրաղբյուր	1.50	0.45	0.79	1.9
Նորաշեն	1.70	0.40	0.90	2.2
Մշկավանք	1.96	0.46	1.38	3.4
Հաղարծին	1.66	0.46	0.99	2.3
Հաղարծին	1.86	0.42	1.14	2.7
Խորանաշատ	1.85	0.40	1.07	2.6
Արծվաբերդ	1.48	0.38	0.65	1.6
Սաղմոսին	1.70	0.48	1.08	2.7
Դսեղ	1.94	0.42	1.24	3.1
Օձուն	1.40	0.52	0.80	2.0
Արդվի	1.70	0.46	1.04	2.6
Արդվի	1.68	0.40	0.88	2.2
Հերհեր	1.70	0.45	1.02	2.5
Աղավնաձոր	1.80	0.50	1.27	3.1
Մարտիրոս	1.82	0.48	1.25	3.0
Կեչուտ	3.00	-	-	-
Մեծ Պարիս	1.56	0.38	0.72	1.5
Վերին Շեն	1.62	0.40	0.82	2.0
Գյուլիստան	1.78	0.42	1.04	2.5
Գետաշեն	1.56	0.38	0.70	1.7
Նորաշեն	2.24	0.44	1.73	4.3
Ալաստան	2.30	0.42	1.74	4.4
Ալաստան	2.12	0.45	1.70	4.0
Տուրցխ	2.12	0.44	1.70	4.0
Մամզարա	2.00	0.44	1.45	3.6
Էչմիա	1.93	0.43	1.24	3.1

Ստորև ներկայացնում ենք հայկական աղացաքարերի չափերը, ծավալն ու մոտավոր կշիռը:

Քարերի ծավալն ու կշիռը միջինացված են, քանի որ ունեն տարբեր տեսակարար կշիռ (2.2-2.7 տ. մ. խ.):[150]

Աղացաքարի կենտրոնում 20-25սմ տրամագծով անցք էր արվում, որով անցնում էր 2-2,5մ երկարությամբ փայտ, որը Սյունիքում կոչվում էր յուծ,[151] Շիրակում՝ նետ կամ նետիկ,[152] Գեղարքունիքում՝ նադի, Տաշիրում՝ իլիկ:[153] Նետի ծայրին արված անցքով անցնում էր ցցի երկաթե միջուկը և պնդոդակով ամրացվում: Անցքի շուրջը փորված քառակուսի կամ ուղղանկյունաձև, մինչև 10սմ խոր փոսրակում դրվում էր կաղնեփայտի հաստ տախտակ, որը ծառայում էր որպես լրացուցիչ ամրություն: Այդպիսով ցցի և նետի միջոցով աղացաքարն ուղղահայաց դիրքով կանգնում էր կալի մեջ: Ադացաքարը շարժման մեջ էր դրվում գոմեշների, եզների և, համեմատաբար փոքր քար ունեցող ձիթհանները՝ ձիերի ուժով, որոնց լծում էին նետի ագատ ծայրին: Աղալու ժամանակ քարին լծում էին մեկ քաշող անասուն, իսկ հունցելիս, երբ քարը պտտելու համար ավելի մեծ ուժ էր պահանջվում, լծում էին երկրորդ կենդանուն: Երկու քաշող անասուն միաժամանակ լծում էին ոչ թե իրար կողքի, ինչպես սովորաբար ընդունված էր, այլ իրար ետևից: Երկրորդ կենդանուն լծում էին հետևյալ կերպ՝ նետի ծայրին մոտ արված անցքում ամրացնում էին մոտ երկու մետր երկար մի փայտե ձող, որի մյուս ծայրը պարանով կապվում էր նետի հակադիր կողմում՝ աղացաքարի մոտ: Նետի, ձողի և պարանի միջոցով ստացվում էր մի եռանկյունի, որի ագատ անկյունում էլ լծում էին երկրորդ կենդանուն:

Աղացած և բրված հումքը փայտե թիակով քիչ-քիչ լցնում էին կալի մեջ և ադացաքարը շարժման մեջ դնում: Բանվորներից մեկը քշում էր լծկանին և միաժամանակ երկար բռնակ ունեցող երկաթե թիակով, որը Գորիսում կոչվում էր ակոա, հումքը խառնում այնպես, որ քարը մշտապես անցներ նրա վոայով:[154] Մեկ այլ բանվոր, որը կոչվում էր մաղչի, աղացած հումքը մաղում էր ավագաններից մեկում:[155] Ադալու ժամանակ բանվորները երգով կարծես թե ոգևորում էին լծկան կենդանուն: Այդ երգերից մեկը գրառվել է Վասպուրականում.

«Կան աբի, Բաբո, կան արի, կալ խանենք,
Կան արի, Բաբո, կան արի, մեռնիմ Թասոյին
Կան աբի, Բաբո, կան արի, մեռնիմ Կուտանին,
Կան արի Բաբո, կալ ելավ:
Կան արի Կուտան, քու խուգուն մեռնիմ,
Կան արի Ջեյրան, քու վուտնիբուն մեռնիմ,
Կան արի, կալ ելավ Ջանո,
Կան արի, կալ փոխինդի,
Կան արի, քի մեռնիմ,
Քու կալն ելավ»:[156]

Ամբողջ հումքն ադալուց հետո ստացված փոխինձը (փոխինդ) կուտակում էին ավագաններից մեկում: Դրանից հետո աշխատանքը դադարեցնում էին, լծկան անասունը փոխում, կալը և աղացաքարը մաքրում և փոխինձը հունցելու համար լցնում կալի մեջ: Փոխինձը հունցում էին տաք ջրով, աղացաքարի ճնշմամբ:

Հունցելիս Սյունիքում մեկ փութ հումքին ավելացնում էին մոտ հինգ հոխա (հոխա-երեք գրվանքա) ջուր, իսկ Գեղարքունիքում, Շիրակում և Ջավախքում՝ 4-5 հոխա:[157] Ձեթի ստացման գործընթացում, թերևս ամենանուրբ և պատասխանատու աշխատանքը հունցելն էր: Այդ իսկ պատճառով հունցում էր միայն ձիթհանի վարպետը, հումքի տիրոջ ներկայությամբ: Բանն այն է, որ ջուրը շատ լցնելու դեպքում ձեթը ջրիկ և դառնահամ էր ստացվում, ինչպես Սյունիքում են ասել՝ «խալ էր ընկնում»,[158] իսկ ջրի սակավության դեպքում քիչ ձեթ էր գտվում:*

---

[150] Облицовочные камни Советского Союза, ред. З. А. Ацагорцян, Ереван, 1983, с. 66.
[151] *ՀԱՆ*,1971,էջ 29, 1976, էջ 38:
[152] *ՀԱՆ*,1978, էջ 56:
[153] *Ս. Ամատունի*, ԲԲ, էջ 501:
[154] *ՀԱՆ*, էջ 38:
[155] *ՀԱՆ*, 1978, էջ63:
[156] *Շ. Կուժիկյան*, Շատախ-Վասպուրական, ՀԱԻ ԲԲԱ, էջ 4:
[157] *ՀԱՆ*, 1976, էջ 47, 1978, էջ 72:
[158] *ՀԱՆ*, 1971, էջ 54:
* Գորիսում, բանասաց Գալուստ Միրիմանյանից գրի ենք առել ավանդություն առաջին ձիթհանի կառուցման մասին. Մարդկանց մեծ դժվարությամբ հաջողվում է ձիթհան կառուցել, բայց նրանք ոչ մի կերպ չեն կարողա-

Հունցելուց առաջ ձիթհանի վարպետը խաչակնքում էր և «Տեր աստված, դու մեզ օգնական», «Ով սուրբ Կարապետ», «Սուրբ Աստվածածին», «Տեր աստված, չարը տար, բարին բեր» ասելով, ակնկալում հաջող վերջավորություն:[159]

Հունցելը տևում էր մոտ երեք ժամ, ստացվում էր մածուցիկ խմորանման զանգված, որը կոչվում էր գելաստ, գիլաս,[160] գիլազ, գելագ, կյալաս և այլն: Լկն հասունանալով կարմրավուն երանգ էր ստանում: Գելաստի հասունացածությունը որոշելու մի քանի ձև է եղել: Վարպետը մի բուռ գելաստ էր վերցնում, ձեռքը պահում հորիզոնական դիրքով և այն սեղմում այնքան, մինչև որ արմունկից 12 կաթիլ ձեթ կաթեր: Ավելի փորձված վարպետները որոշում էին նաև աղացաքարի վրա հավաքվող ձեթի քրտինքանման կաթիլներով և գելաստի արձակած հազիվ լսելի շրշյունի միջոցով:[161]

Հայաստանի հյուսիսարևելյան շրջանների (Տավուշ) տարածքում եղած ձիթհաններն ունեցել են մեկ այլ արտաղրամաս, որը կոչվել է բալաբան:[162] Բառը, որ նշանակում է թմբուկ, տեղի խոսվածքին է անցել, հավանաբար պարսկերենից:[163] Բալաբանը 35սմ տրամագծով, մոտ մեկ մետր երկարությամբ, հաստ թիթեղից շինված գլան էր, որի ծայրերը մետաղյա կափարիչներով փակվում էին: Կափարիչների կենտրոնում արված անցքերում, գլանի երկարությամբ երկաթե ձող էր անցնում, որի ծայրը մոտ 20սմ դուրս էր մնում գլանից: Բալաբանի երկարությամբ անցնող ձողը թմբուկից դուրս մնացած մասերով նստում էր գետնին ամրացված քարե կամ մետաղե գոգավոր հենարանների վրա: Բալաբանի ծայրամասի կափարիչը հանովի էր. այն ամրացվում էր պնդողակի միջոցով: Կափարիչը հանելով: գելաստը լցնում էին բալաբանի մեջ. այն նորից փակում և հորիզոնական դիրքով դնում հենարանների միջև արված կոակի վրա: Բալաբանի բոնակի պտուտակային կամ կիսապտույտ (ետ ու առաջ) շարժումներով կիակի վրա գելաստը համաչափորեն եփվում էր: Տավուշում բալաբանը պտտելու ժամանակ արտասանում էին.

«Կյալաս, կյալաս,
գնաս, գաս, ձեթ ղառնաս»:[164]

Մոտ կես ժամ հետո բալաբանի պարունակությունը տեղափոխում էին գերանատուն: Աբցախի Վերին Շեն գյուղում աղացած հումքը կաթսայի մեջ ջրով եվլել են:[165] Այունիքի Օավ և Շիշկերտ գյուղերում գելաստ չեն պատրաստել, փոխարինելը առանց հունցելու լցրել են գամբյուղների մեջ և մամլելուց առաջ դրանց վրա տաք ջուր լցրել:[166]

Գերանատուն

Երկսրահ ձիթհաններում գերանատունը 15X5մ չափերի մի երկար սենյակ էր, որի մի ծայրում պատը կլորավուն աշտարակի տեսք ուներ և ավելի բարձր էր: Միասրահ ձիթհաններում մամլիչ գերանները դրվում էին երկայնակի պատերից մեկի տակ, նրան գուգահեռ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանի ողջ տարածքում ձիթհանների մամլիչները սկզբունքորեն նույնանման լինելով, ունեցել են կառուցվածքային մասնակի տարբերություններ: Գերանատունը ձեթի հումքի մամլման արտաղրամասն է: Լծակային մամլիչը պատրաստվում էր մինչև 12մ երկարությամբ գերաններից, շարժման մեջ էր դրվում պտուտակային մեխանիզմի միջոցով:

Մոկսում գործող ձիթհանները օժտված չեն եղել պտուտակավոր մամլիչով: Սբա մամլիչ լծակը մի մեծ գեբան էր, որը մի ծայրով մտնում էր խոշոր քարերով շարված պատի տակ, խորշի մեջ, իսկ մյուս ծայրը մնում էր օդում կախված, որտեղից մամլման ժամանակ

նում ձեթ ստանալ: Բանն այն է, որ աղացած հումքը հունցում էին սառը ջրով: Մի քանի անգամ փորձելուց հետո հուսահատված թողնում՝ հեռանում են: Ճանապարհին հանդիպում է սատանան և չարախնդալով հարցնում.

- Հը. ձեթը դուրս չեկա՞վ;

- Բա ա՛յդ էլ չհանե՞ց-պատասխանում են նրան:

- Ջուրը եփած լինեիք, թող դուրս չգար,-ասում է սատանան ու հեռանում, ակամա հուշելով ձեթի ստացման գաղտնիքը:

[159] *Կ.Վ. Սեդրոսյան,* նշվ. աշխ.,էջ 177:
[160] *ՄՀ.* գ. Գ, 1898, էջ 46:
[161] *ԴԱՆ,* 1976, էջ 48:
[162] *ԴԱՆ,* 1982, էջ 13:
[163] *Գ.Մ. Նալբանդյան,* Պարսկերեն-հայերեն բառարան, Եր., 1987, էջ 72:
[164] ԴԱՆ, 1979, էջ 40:
[165] *ԴԱՆ,* 1982, էջ 24:
[166] *ԴԱՆ,* 1976, էջ 46:

ծանրոց էին կլսխում:[167] Նման մամլիչ հիշատակվում է դեռևս մ.թ.ա. առաջին դարում:[168] Նման մամլիչի պատկեր հայտնի է հունական մի կավե սափորի վրա (մ.թ.ա. 6-5-րդ դդ.):[169]

Արարատյան դաշտում և հյուսիս-արևելյան շրջաններում ձիթհաններն ունեցել են մեկ, իսկ Արագածոտնում, Շիրակում, Ջավախքում և Սյունիքում՝ երկու, երեք և ավելի մամլիչ գերան (տախտակ XII, 2): Ձիթհանի հզորությունը փաստորեն մամլիչ գերանների քանակից էր կախված: Գերաններբը խարբերդում կոչվում էին լեռ,[170] իսկ Շիրակում՝ ղոշատ:[171]

Անցյալ դարի ռուս ուսումնասիրողներից մեկը, նկարագրելով էջմիածնի գավառի տնտեսությունը, գրում է, որ ձիթհանի չորս գերաններից երկուսը անշարժ էին:[172] Ագգագրական նյութերն այս տեղեկությունը չեն հաստատում:

Հայ ժողովրդական էպոսում առասպելական հերոսների նետերը համեմատված են ձիթհանի գերանների հետ.

«Տո շնացած գել անգգամ,
Ես գիցա թե Սասուն դաշտ ու դուրան էր.
Չը գիցա թե քար էր, քար ու կապան էր
Ըն ճժեր որ նոր են էլած դիվանական էն:
Ուրանց նետ կա քընց ձիթխոցի գերան»:[173]

Հայ բանահյուսության մեջ պահպանվել են ձիթհանին վերաբերող մի քանի հանելուկներ: Դրանցից մեկում (Այաշկերտ) հավանաբար խոսքը գնում է գերաններբի մասին.

«Չորս եդբայր, գլուխ քար, տակը թաց...»:[174]

Մամլիչ գերանները բարձրացվում էին պտուտակո միջոցով: որի երկարությունը հասնում էր չորս մետրի, իսկ հաստությունը՝ 25-30 սմ-ի (տախտակ XII, 1): Պտուտակը պատրաստվում էր հացենուց և թեղուց: Հայերենում այն առավելապես հայտնի էր *պողեսիկ* կամ *պողեսակ* ձևերով, Շիրակում՝ նաև բուբղի, Արցախում՝ ոլորագերան,[175] Խարբերդում՝ թեղեկոն,[176] Վայոց ձորում՝ պտորիկ: Հիշատակվում է նաև գչիբ ձևը: Պողեսակի մասին Այաշկերտից հայտնի է մի հանելուկ:

«Էն ի՞նչ մարդ ա,
Նա (ոչ) գլուխ էրկինքն ա,
Նա օտքեր գետին»:[177]

Պողեսակը մամլիչ գերանների նկատմամբ ուղղահայաց դիրք էր ունենում: Այն վերջիններբիս հետ միանում էր 1,5-2մ երկար և 40-50 սմ տրամագծով մի կոճղի միջոցով: որ հայոց մեջ ամենուրեք կոչվում էր արջ (տախտակ X): Այդպես կոչվել է, հավանաբար կոպտության պատճառով:

Հայաստանի տարբեր վայրերում, կապված տեղի բուսականության և շինարարական տեխնիկայի հետ, ձիթհանի և մյուս կառույցների փայտե մասերը պատրաստում էին տարբեր ծառատեսակներից: Շիրակում մամլիչ գերաններբը պատրաստում էին սոճուց, որը բերում էին Սարիղամիշից կամ Լոռուց բերված կաղնեփայտից, Արարատյան դաշտում՝ հիմնականում բաղդուց:[178] Արջը պատրաստում ում էին առավելապես ընկուզենուց, երբեմն՝ հացենուց, թեղուց ու նույնիսկ՝ փշատենուց՝ Խարբերդի Բարջանճ գյուղում, որտեղ ավելի հարմար շինափայտ չկար:[179] Արջը պատրաստելու համար կոճղը ճղում էին երկու հավասար մասի (տապակ), դրանց վրա պողեսակոն համապատասխան գալարներ փորում և մետաղե գոտիներով նորից միացնում իրար: Հմուտ վարպետները արջի մեջ գալարներբ էին փորում առանց այն ճղելու, միակտոր կոճղի մեջ: Շիրակում այդ գալարները կոչվել են դոն, իսկ տապակներբը տարբերակվել են «որձ» և «էգ» անուններով:[180] Պողեսակ և արջ շինող վարպետները կոչվել են պողոսկապան:[181]

Արջը դրվում էր գերաններբի վրա, նրանց ծայրամասում, այնպես, որ պողեսակը անցներ դրանց միջև: Այն գերաններին կապվում էր շղթաներով և բնատեներով: Եթե մամլիչն ունենում էր մեկ գերան, այն արջի հետ միացնելու համար աբհեստականորեն ծյուղավոր-

---

[167] *И.А. Орбели*, Мокс, с. 24.
[168] *Витрувий*, 10 книг об архитектуре, М., 1976, с. 124.
[169] *Я. Свикке, Н. Романов*, Очерки из ист. техники пищевой промышленности, История техники, М.-Л., 1936. вып. 4, с. 137.
[170] *Բարջանճ*, էջ 220:
[171] *Ա. Մխիթարեանց*, Փշրանք Շիրակի ամբարներից, ԷԱժ , հ. Ա, Մոսկվա-Ալեքսանդրապոլ, 1901, էջ 293:
[172] *Н. Спасский*, О разведении кунжута и приготовление из него масла в Эчмиадзинском уезде, ЗКОСХ, Тиф., 1870, с. 83-84.
[173] *Գ. Սրվանձտյանց*, երկեր, հ. 1, էջ 100:
[174] *Ս.Բ. Հարությունյան*, նշվ. աշխ, էջ 175:
[175] *Դր. Ամատյան*, ԳԲ, էջ 920:
[176] *Բարջանճ*, էջ 219:
[177] *Ս.Բ. Հարությունյան*, նշվ. աշխ, էջ 176:
[178] *ԴԱՆ*, 1975, էջ 32, 1979, էջ 45, 1982, էջ 26:
[179] *Բարջանճ*, էջ 219:
[180] *ԴԱՆ*, 1976, էջ 5:
[181] *Ստ. Մալխասյանց*, ՀԲԲ, հ. 4, էջ 113:

վում էր ծայրի մասում երկու կողմից կարճ գերաններ կապելու միջոցով:[182] Հայաստանի հյուսիսարևելյան շրջաններում մամլիչ պատրաստելու համար անտառում ճյուղավորված ծառ էին ընտրում:

Արջի և գերանների միացման տեղը կոչվում էր խաչկապ:[183]

Պտտման ժամանակ արջի և պտուտակը շփման դիմադրությունը փոքրացնելու համար պողեսակոն շաբաթը մեկ անգամ, որպես քսայուղ, տավարի ուղեղ էին քսում:[184] Նույն նպատակով օգտագործում էին նաև ձեթի և ճրագուի եվուկ:[185] Այն քսում էին նաև մամլիչ գերաններին ու դրանք փաթաթում գելաստը քամելու տուպրակներով, որպեսզի փայտը ցեց չընկներ:

Գերանատան այն մասը, ուր տեղադրված էր պողեսակը, հատակը ընհանուր մակերեսից մոտ մեկ մետր ցածր էր լինում: Այդ հատվածը կոչվում էր կախտուն կամ կախելատուն:[186] Անվան առաջացումը կապված է պողեսակի ստորին ծայրին ամրացված, 1-1,5մ տրամագծով և 30-40սմ հաստ քարի հետ, որ կոչվում էր կախքար կամ կախելաքար:[187] Վայոց ձորում այն կատակով անվանել են նաև «մսխալի քար», այն համեմատելով աղացաքարի հետ: Պողեսակն անցնում էր կախքարի միջով և ծայրին ուղղահայաց ղիրքով ամրացված մետաղե ցցով նստում գետնում թաղված քարի վրա, որ Խարբերդում կոչվում էր հիմքար:[188] Սրա մեջ ամրացվում էր երկաթից կամ պղնձից շինված գոգավոր մի հարմարանք, որը հայերենի տարբեր խոսվածքներում կոչվում էր պիժիկ (Սյունիք),[189] Արցախում՝ ճենճաքար,[190] Մուշում, Շիրակում, Բասենում, Խոյում, Մոկսում՝ լիթոն:[191] Այն կատարում էր առանցքակալի դեր, կախքարի պտտման ժամանակ փոքրացնելով շփման դիմադրությունը: Գերանները բարձրացնում կամ իջեցնում էին կախքարը պտտելով: Այդ նպատակով կախքարի եզրերին չորս հակադիր փոսեր էին արված, որոնց մեջ փայտե լծակներ էին ամրացվում: Երեք կամ չորս գերանից կազմված մամլիչը բարձրացնելու համար կախքարին երկար պարանների միջոցով լծկան էին լծում, իսկ ավելի թեթև մամլիչների դեպքում՝ այն ձեռքով էին պտտում: Մեկ գերան ունեցող ձիթհաններում հաճախ կախքար չէր լինում. մամլիչը բարձրացնում էին պողեսակո ներքին ծայրին, հորիզոնական դիրքում ամրացված լծակը (նիժարակ) պտտելով:[192]

Մամլիչ գերանները մյուս ծայրով նստում էին պատի ստորին մասում արված խորշի մեջ, որ հայտնի էր օջախ անվամբ, Խարբերդում այն կոչվում էր պատվոն,[193] իսկ Վանում՝ «գերնի գլխատուն»:[194] Այն ունենում էր 1-1,5մ երկարություն, 60-80սմ բարձրություն, մոտ մեկ մետր խորություն: Խոռոչը շարվում էր որձաքարե կամ գրանիտե խոշոր քարերից: Վերին հորիզոնական սալ քարը կոչվում էր բախտաքար կամ կարմնջաքար:[195] Օջախի վրայի այդ հատվածը կոչվում էր բեռ: Պատի այս հատվածը շարվում էր հսկայական քարաբեկորներից: Հայտնի են դեպքեր, երբ կից կառուցվում էին երկու ձիթհան, որոնք ունենում էին ընդհանուր բեռ: Բեռի այս հսկայական ծանրությունը ստեղծվում էր ի հակակշիռ մամլիչ գերանների, որոնց ճնշումը մամլման ժամանակ հակառակ ծայրում ագդում էր դեպի վերև: Եղել են դեպքեր, երբ ճնշմանը չդիմանալով, պատի այս հատվածը փլվել է, կամ կոտրվել են մամլիչ գերանները: Վերջին հանգամանքը նկատի ունենալով, կախտան պատի հիմքի մասում՝ գերանների ուղղությամբ անցք էին թողնում, անհրաժեշտության դեպքում գերանները փոխելու համար:[196]

Տավուշում, որպես գերանների ճնշման հակակշիռ, օգտագործվել է մեկ այլ հնարք, որ Հայաստանի մյուս վայրերից մեզ հայտնի չէ: Գերանատան վերին մասում մոտ երեք մետր խորությամբ և նույնքան էլ կողմերով վոս էր արվում, որում ուղղահայաց ղիրքով տնկվում էին մոտ չորս մետր երկարության երկու սյուն,

---

[182] *ԴԱՆ, 1978*, էջ 16:
[183] *ԴԱՆ*, 1979, էջ 15:
[184] *ԴԱՆ*, 1978, էջ 16:
[185] *ԴԱՆ*, 1981, էջ 51:
[186] *ԴԱՆ*, 1971, էջ 44:
[187] *Ստ. Մալխասյանց*, ՀԲԲ, հ. 2, էջ 368, *ԴԱՆ*, 1971, էջ 67:
[188] *Բարջանճ*, էջ 220:
[189] *ԴԱՆ*, 1971, էջ 46:
[190] *Ս. Ամատունի*, ԲԲ, էջ 248:
[191] *Ա. Լ. Դարրինյան*, նշվ. աշխ, էջ 63:
[192] ԴԱՆ, 1978, էջ 16:
[193] *Բարջանճ*, էջ 220:
[194] *Շ. Կուժիկյան*, նշվ. աշխ,էջ 3:976:
[195] *Ա. Ամատունի*, ԲԲ, էջ 84, *ԴԱՆ*, 1971, էջ 49, 1976, էջ 32:
[196] *ԴԱՆ*, 1971, էջ 52:

իրարից 60-70սմ հեռավորությամբ, այն հաշվով, որ մամլիչ գերանի ծայրը անցներ դրանց միջև: Փոսի հատակում դրանք երկաթե կապով միացվում էին իրար, վերգետնյա մասում՝ կարճ կոճղով, որը երկաթե միջուկ ուներ: Մամլման ժամանակ սյուներն իրար կապող հորիզոնական կամրջակը ներքևից իր վրա էի ընդունում մամլիչի ճնշումը: Բեռին հուսալիություն և ամրություն տալու նպատակով, փոսի մեջ 10-12 հատ, 2-2,5մ երկար կոճղերից, կարկաս էին հավաքում, դրա մեջ ներառելով նաև բեռի սյուները: Կոճղերի միացնում էին երկաթե խոշոր զամերով: Փռրվածը հորը ամբողջովին լցվում էր խոշոր քարերով և հողով, որպես լրացուցիչ ամրություն:

Որպեսզի գերանները չխախտվեին, գերանատան միջին մասում, նրանցից աջ ու ձախ երկու սյուն էի դրվում, որ կոչվում էին ճոճկալ,[197] Շիրակում՝ ճիճկոլ:[198] Գերանների միջնամասում, գետնին տափակ քար կամ կոճդ էի դրվում, որի վրա հանգիստ ժամանակ նստում էին մամլիչ գերանները: Դրանք կոչվում են գերանի պորտ:[199]

Գերանների ետնամասի տակ, օջախից մոտ մեկ մետր հեռու, հոր էր փորված, որ կոչվում էր մթնատուն: Սրա վերին մասում, ուղիղ մամլիչի տակ, շինված էր ձեթ քամելու ավազանը: Շիրակում այն կոչվում էր խազնա, իսկ Ուտիքում՝ քոթուկ: Լկն մոտ մեկ մետր խորություն և 60x60 սմչափերով քարից զուռ էր, որ թաղվում էր գետնում, այնպես, որ մակերեսը գետնից մի քիչ բարձր մնար: Արարատյան դաշտում և Շիրակում այն ամբողջական էր, իսկ մյուս վայրերում շարվում էր նաև առանձին քարերից: Լոռցախում և անտառային այլ շրջաններում ավազանը շինում էին փայտից՝ արկոի ձևով և կաղնու ամրողջական կոճղերից:[200] Ավազանի հատակը մի անկյանը թեթևակի թեքություն էին տալիս և վրան փոսրակներ անում, որոնցով մաքուր ձեթը հոսում էր հավաքիչ ամանի մեջ: Գորիսի Տեղ գյուղի Քոլունց ձիթհանի ավազանի հատակը շինված է եղել խաչքարի ռեկորից: Հնարավոր է, որ այն օգտագործվել է որպես հարմար քար, բայց բացառված չէ, որ ունենար ձիթհանը չար աչքից հեռու պահելու և ձեթի առատություն ակնկալելու նշանակություն:[201]

Գելաստին, զամբյուղների մեջ լցնելիս, հարդ էին խառնում:[202] Այն գերանատուն տեղափոխելուց առաջ գերանները բարձրացնում էին, ինչպես Սյունիքում էին ասում. «սարն էին հանում»: Գերանները բարձրացնում կամ իջեցնում էին կախքարի եզրերին կամ վերին մակերեսին արված փոսիկների մեջ ամրացված լծակների միջոցով այն և պոդոսակը պտտելով: Երկու և ավելի գերանների դեպքում կախքարը պտտման մեջ էր դրվում լծկան անասունի ուժով: Գերանները բարձրացնելիս Վասպուրականում երգել են.

«Քաշի մարալ, բանցրացնենք կերան,
Ձեթ քամիլու ժամանակն,
Քաշի մարալ, քի մեռնեմ,
Քաշի քու տան մոտերի,
Օլոր տու, քու խուզուն մեռնեմ»:
Մամլիչ գերաններն իջեցնելիս երգել են.
Քաշի կատանին մեռնեմ, ձէթ ելավ,
Քաշի քու խոգուն մեռնեմ,
Քաշի մարալ տանի գախի ոլոր տա,
Շոտ քամենք ձէթը, քաշի, կորբան,
Քաշի քու աչքիրուն մեռնեմ,
Քաշի մարալ ձեթ կը չըռչըռա,
Քաշի խոգիս, դուշմանի սիրտ մռմռա,
Ոլոր տու ելավ, պանտ ելավ,
Ոլոր տու մարալ, քի մեռնիմ»:[203]

Վարպետն իջնում էր մթնատուն և գելաստով լցված տափակ զամբյուղները ավազանում դասավորում իրար վրա: Միաժամանակ ավազանում դրվում էր 15-20 զամբյուղ: Զամբյուղը գործվում էր ուռենու ոստերից, ճլից (ճահճախոտ), կանեփի թելից կամ այծի մազից:[204] Շիրակում դրանց անվանում էին մեզար: Ճնշումն ավելի մեծացնելու համար յուրաքանչյուր 3-4 զամբյուղից հետո մոտ 15սմ հաստության փայտե մի կոճդ էին դնում: Դասավորելուց հետո դրանց վրա դնում էին ավազանի չափերին համապատասխան, մոտ 30 սմ հաստության տախտակ, որը Սյունիքում կոչվում էր սաթ, Շիրակում՝ երեսնոց, Արցախում՝ լաշ

---

[197] *Ս. Ամատունի*, ԲԲ, էջ 452, *Ստ. Մալխասյանց*, ՀԲԲ, հ. 3, էջ 229:
[198] *ԴԱՆ*, 1971, էջ 29:
[199] *ԴԱՆ*, 1979, էջ 42:
[200] *Н. Абелов*, ук. соч., с. 99.
[201] *ԴԱՆ*, 1971, էջ 61:
[202] *ԱՀ*, գ. 3, 1898, էջ 46:
[203] *Շ. Կուժինյան*. Նշվ. աշխ., էջ 3:
[204] *Ստ. Մալխասյանց*, ՀԲԲ, հ. 2, էջ 6:

կամ տրի կլոխ,[205] Խարբերդում՝ բարձիկ,[206] Վանում՝ գերնի բարձ: Կարսում այդ փայտի փոխարեն սալաքար է օգտագործվել:[207] Երեսնոցի վրա մետաղե օղ էր ամրացված, մամլելուց հետո այն ավազանից հեշտությամբ հանելու համար:

Մամլիչի տակ միանգամից դրվող գելաստի քանակությունը կոչվում էր դիրք:[208] Ն. Բյուզանդացու անտիպ բառարանում դրքատունը բացատրվուծ է.«փոսն, ուր դիգանին զամբիւղն ձիթոյ եւ կարասն»:[209] Հետաքրքրական է, որ դիրք բառը «դիրեք» ձևով անցել է թուրքերենին:[210]

Մամլման ժամանակ ավազանի պատերի հետ զամբյուղների շփման դիմադրությունը փոքրացնելու նպատակով ավազանի պատերը երեսապատվում էին կաղնու կամ ընկուզենու տախտակներից շինված վահանակներով: Նույն նպատակով գամբյուղների և ավազանի պատերի միջև սպիտակավուն, չորացած փափուկ խոտ էին դնում, որ կոչվում էր հոսին:[211]

Այս աշխատանքներն ավարտելուց հետո գերաններն իջեցնում էին այնքան, մինչև որ կախքարը գետնից կտրվեր և պողեսակի ու գերանների հետ, որոնք ամբողջ ծանրությամբ նստում էին ավազանի վրա, կախվեր օդում: Մամլումը սովորաբար սկսում էին երեկոյան: Մամլիչի ծանրության ազդեցությամբ գելաստից ձեթը մինչև առավոտ քամվում էր, այդ ընթացքում գերանները դանդաղ իջնում էին և կախքարը նստում էր իր տեղում: Երբ կախքարն իջնում էր իր տեղը, ինչպես Կոտայքում էին ասում՝ «կախն առնում էբ»:[212] Հաճախ, գելաստից ձեթն ամբողջովին գտելու համար գերանները նորից էին բարձրացնում և ավազանի մեջ ավելացնում ևս մի քանի հաստ կոճդ ու նորից մամլում: Գելաստից զտված ձեթը հոսում էր ավազանի տակ թաղված կարասի մեջ: Գառնիում, երբ կարասը լցվում էր, վարպետն ասում էր. «կարասը իաչեց»:[213] Կարսի նահանգում կարասի փոխարեն դրվում էր նաև քարից շինված գուռ:

Միջին հգորության ձիթհանները մեկ հերթափոխում վերամշակում էին մինև 15 փութ հումք, որից ստացվում էր 4,5-5 փութ ձեթ:[214]

Ձիթատուն

Հայաստանում տարածված ձիթհանի մյուս տեսակը (ձիթատուն), կապված քնջութի մշակության գոտու հետ, գոյատևել է միայն Արարատյան դաշտում, Շաղուրում և սակավ քանակությամբ՝ Սյունիքում: Ալարատյան խոսվածքում այն հայտնի էր կնճիթահանք,[215] դայխանա կամ դահինիանա ձևերով:[216] Մեգ հայտնի միակ համալիր ձիթհանը, որտեղ կտավատ և քնջութ է վերամշակվել, գտնվել է Ներքին Թալինում:

Հայաստանի տարածքում հայտնի հնագույն ձիթատունը հայտնաբերվել է Կարմիր բլուրի պեղումներից: Նրանում գտնված քնջութի մնացորդները, սանդերը, աղորիքները, քաբե գուռը, օջախը և այլն ապացուցում են, որ դա ձիթհան է եղել, կազմված երեք հարակից, երկայնակի սրահներից, որոնցում էլ ընթացել է ողջ արտադրական գործընթացը:[217]

Ձիթատունն իր կառուցվածքով և արտադրաեղանակներով էապես տարբերվել է ձիթհանից: Ցավոք 1920-ական թվականներին ամբողջովին դուրս գալով շահագործումից, ձիթատներն ավերվեցին կամ փոխվեց այդ շենքերի հատկացվածությունը: Ձիթատան կառուցվածքն ու աշխատանքի գործընթացը փորձել ենք վերականգնել դաշտային ազգագրական նյութերի հիման վրա:

19-րդ դարի վերջերին և 20-բդ դարի սկզբին քնջութ վերամշակող ձիթատները տեղադրվում էին 80-00քմ ընդհանուր մակերեսով մեկ սրահում: Երբեմն այլ նպատակով կառուցված շենքերը վերածել են ձիթատան: «Դայինխանայ մի ևս (որ է՝ քունճիթի ձիթահանք) ունի սբ. Աթոռս ի գեօղս (Վադարշա-

---

[205] *Ф. Джейранов*, ук. соч., с. 79.
[206] *Բարջանճ*, էջ 220:
[207] Ф. С. Янович, ук. соч., с. 41-42.
[208] *Ստ. Մալխասյանց*, ՀԲԲ, հ. 1, էջ 523, *ԴՄ*, 1978, էջ 43:
[209] *Ա. Ավագյան*, Վիմ. բառ., էջ 68-69:
[210] *Fusun Ertug*, Linseed oil and oil mills in Central Turkey. Flax *Linum* and *Eruca*, important oil plants of Anatolia, Anatoilan Studies, Vol. 50 (2000), p. 181.
[211] *Ստ. Մալխասյանց*, ՀԲԲ, հ. 3, էջ 131:
[212] *ԴՄ*, 1986, էջ 22:
[213] *ԴՄ*, 1986, էջ 27:
[214] *С.П. Зелинский*, Экономический быт гос. крестьян в Шорагеле, Александрапольского уезда, Эриванской губ., МИЭБГКЗК, т. 1, Тифлис, 1885, с. 53.
[215] *ԱՀ*, գ. 3, 1898, էջ 51:
[216] *ԴՄ*, 1979, էջ 47, *Վ. Սարոյան*, Երևանի ազգագրությունը, ՀԱԻ ԱԲԱ, մաս 2, էջ 16, *Զամբռ*, էջ 191:
[217] *Զ.Մ. Դասաբյան*, նշվ. աշխ., էջ 112:

պասս-Հ. Ս.) մեր՝ կից սբ. Աթոռոյս՝ ի մեջ քարվանսարային մերոյ».[218] Արարատյան դաշտում դրանք կառուցվում էին տեղի շինարվեստին հատուկ շինանյութերով՝ քարից և աղյուսից: Տափակ կտուրը նստում էր սյուների վրա: Արտաքինից ձիթատունը չէր տարբերվում բնակելի տներից: Այն ուներ երեք արտադրամաս, տեղադրված նույն սրահում: Առաջին արտադրամասում հատիկը թրջում, լվանում և թեփահան էրն անում: Ձիթատան երկայնական պատերից մեկը տակ, կողքկողքի կառուցվում էր մինչև 500լ տարողության երեք ավազան: Ավելի հնում դրանց փոխարեն եղել են քարե գռեր, որոնք կոչվել են թաղար:[219] Այս ավազանների խորությունը հասնում էր մոտ մեկ մետրի: Ձիթատան մի անկյունում փորված ջրհորից առաջին ավազանը լցնում էին ջրով, որում հատիկը թրջում էին, միաժամանակ գռի մեջ լցնելով 10-20 փութ հումք և թողնում մեկ օր:[220] Հաջորդ օրը հատիկը փայտե գոգավոր թիերով տեղափոխել են երկրորդ գռի մեջ, որը կընձաձև հորինվածք է ունեցել, նեղացող մասը դեպի ներքև: Այն հատակին փոքր անցք է ունեցել, ջրերը հեռացնելու համար, որը անհրաժեշտության դեպքում խցանով փակել են: Որպեսզի քնջութի հատիկները ջրի հետ դուրս չգային, անցքը ծածկել են հյուսածռ ցանցով և մի քանի ժամ շարունակ հումքը մաքուր ջրով լվացել: Դրանից հետո հատակին կարպետ են փռել և քնջութի հատիկները մի քանի մատ հաստության շերտով փռել վրան: Մի քանի բանվորներ փայտե թիակներով հատիկը ծեծել են այնքան ժամանակ, մինչև այն անջատվեր թեփից: Թեփահանված հատիկն այնուհետև տեղափոխել են երրորդ գռի մեջ, որը նախապես լցրել են աղաջրով (ջրում այնքան աղ էին լուծում, որ ձուն չսուզվեր): Գռի մեջ լցրել են մինչև 20 փութ քարաղ, որ օգտագործվում էր ողջ սեզոնի ընթացքում, ամեն մի հերթափոխում ավելացնելով ևս մի քանի ղուլլ ջուր և 1-2 փութ աղ:[221] Այս գռի մեջ փայտե թիակներով հումքը մի քանի ժամ շարունակ խառնել են, որի ընթացքում մաքուր հատիկը առանձնանում էր թեփից: Այստեղից հատիկը նորից տեղափոխել են երկրորդ՝ կրնաձև գռի մեջ և մի քանի անգամ մաքուր ջրով լվացել: Թեփից և աղից մաքրված հումքը այնուհետև բովել են:

Ձիթատան երկրորդ արտադրամասը բովմն էր: Ի տարբերություն կտավատ վերամշակող ձիթհանների, դրանց բովերը հար և նման էին ռուսական վառարան հիշեցնող փռերին, որոնք հայոց կենցաղ համեմատարար ուշ են թափանցել, այն էլ միայն Հայաստանի հյուսիսարևելյան շրջաններ: Հնարավոր է, որ ձիթատան այս արտադրամասը ոչ մի առնչություն չունենա ռուսականի հետ, դա կարող էր լինել գուտ պատահական նմանություն: Մեզ հայտնի է միայն Կարմիր բլուրի ձիթհանի բովման եղանակը (կավամանների մեջ) և դարասկզբի փուռը, իսկ դրանց միջև ընկած հսկայական ժամանակահատվածը բաց է մնում, համապատասխան նյութի բացակայության պատճառով:

Փռան հատակը բարձրությունը գետնից մոտ 1,5մ էր, կողային չափերը՝ մոտ երկու մետր: Այն ջեռուցում էին փայտով, աթարով (քակոր) կամ ձիթատուների չորացած ցողուններով: Երբեմն ջեռուցման համար նաև քուսպ էին օգտագործում, որը գրեթե ծուխ չէր արձակում, երկար էր այրվում և պահպանում կայուն ջերմաստիճան: Կրակը հանգչելուց հետո շիկացած ածուխներն ու անձողները հավաքում էին մի անկյունում և դեռևս խոնավ քնջութը սփռում փռան հատակին, միանգամից երեք փթից ոչ ավելի քանակությամբ: Մետաղե ծայրակալ ունեցող մի երկար ձողով այն շարունակ խառնում էին, դրանով իսկ նպաստելով հումքի հավասարաչափ բովմանը: Մոտ երեք ժամ բովելուց հետո հումքը մաղում և լցնում էին հովտուն կոչվող մի ավազանի մեջ:

Ձիթատան երրորդ արտադրամասը աղացն էր: Ի տարբերություն ձիթհանների, որտեղ պտտվող աղացաքարն ուղղահայաց դիրք ուներ, ձիթատան աղացաքարերը հորիզոնական էին: Դրանք շինված էին որձաքարից կամ կարծր ավազաքարից (Արմավիրի մարզի Արմավեր և Նալբանդյան գյուղերի ձիթատներում օգտագործվել է Նալբանդյանի մոտ գտնվող «Սուրբ Դավթի քար» քարհանքի հումքը): Մշակման է ենթարկվել վարի աղա-

---

[218] *Զամբռ.* էջ 191:
[219] *Վ. Սարգսյան*, նշվ. աշխ., մաս 2, էջ 16:
[220] *ՊԿՀՊ* за 1904 г., с. 36.
[221] Անդ, էջ 17:

ցաքարի վերին մակերեսը, ստորին մասը թողնելով հողում: Քարի շփվող մակերեսը կոնաձև ուռուցիկ էր, երիգված նույն քարից արված, մոտ 10սմ բարձր բոլորքով, որը մի կողմում շրթնաձև ելուստ ուներ, որտեղից աղացված գանգվածը հոսում էր հավաքիչ ամանի մեջ: Վերին քարի տրամագիծը մոտ մեկ մետր էր, 35-40 սմ հաստությամբ և ուներ ներքին քարի ուռուցիկությանը համապատասխան գոգավորություն: Արա շփվող մակերեսին կենտրոնից դեպի եզրերը ուղղված երեք փոսորակներ էին արվում, որոնք եզրերին մոտ գրեթե վերանում էին: Դրանք արվում էին քարի պտտման ուղղությանը հակառակ:[222] Վարի քարի կենտրոնում արված անցքում ցից էր ամրացվում, որն ուներ երկաթե միջուկ՝ լիթոն: Այն որպես պտտման առանցք էր ծառայում վերին քարի համար: Վերին քարի շփվող մակերեսին, անցքից աջ և ձախ արված փոսորակներում դրվում էր երկաթե մի հարմարանք, որ կոչվում էր տապարակ (թավարա): Արա կենտրոնում բացված անցքով էր անցնում լիթոնի ծայրը:[223]

Պտտվող քարի վերին հաբթ մակերեսին խաչաձև տեղադրված չորս փոս էր արվում, որոնցում դրված ծողերի վրա ամրացվում էր մոտ մեկ փութ տարողության փայտե ամբար: Այն հատած բուրգի տեսք ուներ, որի սուր ծայրը ուղղված էր դեպի ներքև: Արարատյան դաշտում այն կոչվում էր դոխ:[224] Նրա ներքին մասում հորիզոնական դիրքով ամրացվում էր փայտե կիսախողովակ, որը երկակի նշանակություն ուներ, նախ՝ փակում էր դոխի ելքը և երկրորդ՝ քարի պտտման ժամանակ ցնցվելով, համաչափորեն բաց թողնում հատիկը, որ կիսախողովակից լցվում էր աղացաքարի կենտրոնի անցքի մեջ: Հատիկները լցվելով աղացաքարի ներքին մակերեսին արված փոսորակների մեջ, պտտման ընթացքում, մոտենում էին եզրերին և տրորվում: Տրորված կաթնագույն զանգվածը նեբքին քարի շուրթից հոսում էր հավաքիչ ամանի մեջ: Արարատյան դաշտում այն կոչվում էր քնջութի կաթ և ղայան, որտեղից էլ, հավանարար, ծագել է ղայախանա բառը:[225]

Աղացաքարը շարժման մեջ էր դրվում քաշող անասունի (եզ, ձի. ավանակ) ուժով: Աշխատանքի ընթացքում հաճախ կենդանու աչքերը փակում էին, որպեսզի գլխապտույտ չունենար: Վերին քարի մակերեսին հորիզոնական դիրքով ամրացված ծողին լծում էին մեկ կենդանի: Ձողը քարին ամրացվում էր մետաղե օղակներով, Նրա ծայրը հասնում էր մինչև քարի կենտրոնի անցքը, որպեսզի աղացվող հումքի հոսքին չխանգարեր:

Քնջութի աղացված գանգվածից մաքուր ձեթի գտումը կատարվում էր տաք ջրի միջոցով, Ձիթատան ավազաններից մեկը լցնում էին տաք ջրով, աղացած գանգվածը ավելացնում վրան ու փայտե թիակներով խառնում այնքան ժամանակ, մինչև որ մաքուր ձեթը բարձրանար ջրի մակերես: Ջրի մեջ եղած զանգվածի հովանալուց հետո բանվորներն այն տրորում էին ոտքերով, մինչև որ ձեթն ամբողջովին զտվեր:[226] Ջրի մակերեսից այն փայտե շերեփներով հավաքում և լցնում էին կճուճների մեջ: Այնուհետև ավազանում մնացած գանգվածը հավաքում էին պարկերի մեջ, ոտքերով տրորում և քամ դնում: Միջնադարյան Հայաստանում մշակված հումքից ձեթ զտելու համար այն տրորել են ոտքերով, ապա մնացած քուսպը կամ խմորը կույտ են արել, նստել վրան ու գույգ ձեռքի հարվածներով մամլել:[227] Սա հավանարար վերաբերում է քնջութից ձեթի ստացման գործընթացին: Ավազանի հատակի նստվածքի մեջ մնացած բուսայուղը լրիվ կորզելու նպատակով դրա մեջ բամբակե լաթեր էին գցում և քամում:

Մաքուր ձեթը մի քանի օր թողնում էին ձիթատանը, մինչև այն պարզեր (նստվածք տար), որից հետո ձիթատան տերը վերցնում էր վարձը՝ մեկ փութ հատիկից 4-5 գրվանքա ձեթ: Քնջութից ստացվում էր հումքի մեկ քառորդի չափով ձեթ: 3-4 օրվա ընթացքում մշակվում էր մեկ խալվար (30 փութ) քնջութ, որից ստացվում էր 6-7,5 փութ ձեթ:[228]

Թե տարածման ինչ շրջան է ունեցել քնջութի ձեթի արտադրությունն Արևմտյան Հայաստանի տարածքում, համեմատական նյութերի

---

[222] *Հ. Խ. Խալփախչյան*, նշվ. աշխ., էջ 23:
[223] *ԴԱՆ*, 1979, էջ 49:
[224] *Անդ*, էջ 50:
[225] *Վ. Սարոյան*, նշվ. աշխ., մաս 2, էջ 17, *ԴԱՆ*, 1979, էջ 30:
[226] *ԴԱՆ*, 1979, էջ 53:
[227] *Բ.Ն. Առաքելյան*, նշվ. աշխ., հ. 1, էջ 50:
[228] *Գ.Ռ. Առաքելյան*, Արևելյան Հայաստանի արդյունաբերությունը 19-րդ դ. երկրորդ կեսին, Եր. 1990,էջ 155:

բացակայության պատճառով մեզ հատնի չէ, բայց հայկական ձիթատանը հար և նման կառույցներ հայտնի են նաև Բուլղարիայում: Բուլղար ազգագրագետ Գ. Գրամատիկովը ուսումնասիրել է Բուլղարիայի հարավում գտնվող Խասկովոյի շրջանի համանման կառույցները և հանգել այն եզրակացության, թե մշակույթի այդ տարրը Բուլղարիա է անցել Փոքր Ասիայից:[229] Հայտնի է նաև, որ երկոի այս հատվածում հայեր են ապրել: Վերոհիշյալ փաստերի հիման վրա, կարելի է ենթադրել, որ այն Բուլղարիա մուտք է գործել հայերի միջոցով: Հետագա ուսումնասիրությունները պարզություն կմատցնեն այս հարցում, սակայն այն փաստը, որ Հայկական լեռնաշխարհը եղել է ձիթհանության առաջացման կենտրոններից մեկը, վեր է ամեն մի կասկածից:

Անցյալ դարի վերջերից Արևելյան Հայաստանի գանազան վայրերում կառուցվում են ժամանակի տեխնիկային համապատասխանող մի շարք արտադրական կառույցներ, այդ թվում՝ նաև ձիթհաններ: 1889թ. կալվածատեր Գ. Խանարյանը Վաղարշապատում կառուցում է շոգիով աշխատող ձիթհան, որը վառելիքի սղության պատճառով, մի քանի տարի անց տեղափոխում են Ջալալօղլի:[230]

19-րդ դարի սկզբին ֆրանսիական մի ընկերություն Արագդայանում կառուցեց ձիթագործարան, երկու մամլիչով, որը լրիվ կարողությամբ աշխատեց մինչև 1917թ.:[231]

Փորձեր են արվել նաև կատարելագործելու ավանդական ձիթհանները: Ուտիքի Ջագլիկ և Գետաշեն գյուղերում անցյալ դարի վերջերին վեայված են ջրով աշխատող ձիթհաններ: Դաշտային ազգագրական նյութերը դրանք չհաստատեցին, սակայն այդպիսին արձանագրվեց Բանանց գյուղում: Ձիթհանից ոչինչ չէր պահպանվել, գյուղի նույնիսկ ամենատարեց մարդիկ դրա գործարկման մանրամասները չէին հիշում:

Ջրով աշխատող մի գործարան է եղել Դիլիջանում, որը պատկանել է գերմանացի Բեքմանին: «Այն ընծայում էր մարդկանց երեք տեսակ ալյուր, այն է շատ լավն՝ նաշիհ, միջակ և հասարակ. երկրորդ՝ բրնձոր դինկ. երրորդ՝ ձիթեհանք. չորրորդ՝ ցորնու կալ, հինգերորդ՝ տախտակ քաշելու գործիք»:[232]

Ձիթանի կառուցումը, շահագործումը. վարձատրության ձևերն ու չափուկշիռները

Ձիթհանները, ինչպես նաև ջրաղացները, եղվել են եկամտաբեր հաստատություններ: Դրանք կառուցվել են առանձին գործունյա անհատների կամ փայատերերի խմբերի կողմից: Ի տարբերություն ջրաղացի, որի կառուցման տեղի ընտրության պարտադիր պայմանը բավարար քանակության ջրի առկայությունն էր, հաճախ բնակավայրերից բավականին հեռու, ձիթհան կարելի էր կառուցել ցանկացած վայրում: Այն վերամշակում էր մեկ կամ մի քանի բնակավայրի բերքը: Պատվիրատուների քանակին համապատասխան, ձիթհանի շահույթը մեծանում էր:

20-րդ դարի սկզբներին Հայաստանի տարբեր շրջաններում նոր ձիթհաններ են կառուցվել: Սյունիքի Տեղ գյուղում, չնայած գործող չորս ձիթհանների առկայությանը, 1913թ. ձեռներեցների մի խումբ սկսեց նորը կառուցել, որը, սկսված պատերազմի պատճառով անավարտ մնաց:[233] Տավուշի Արծվաքար գյուղում 1916թ. ձիթհան կառուցվեց մի քանի մարդկանց միջոցներով, նրանցից մեկը բաժնետեր դարձավ բանուկ ճանապարհի հարևանությամբ գտնվող իր հողամասում տեղ հատկացնելու համար:[234]

Նման բնույթի մի վկայություն է հայտնի 15-րդ դարից, երբ հողամասի տերը ջրաղացի բաժնետեր է դարձել:[235]

Սովորաբար ձիթհանի կառուցման աշխատանքներին մասնակցել է գրեթե ողջ համայնքը: Լկս աշխատանքների ժամանակ ի հայտ էր գալիս փոխօգնության՝ համկալության դրսևորումը:[236] Դա արտահայտվում էր հատկապես աղացաքարերի և գերանների տեղափոխման ժամանակ, երբ դրանց լծում էին 12 և ավելի գույգ լծկան: Լծկանի տերերը երբեմն այդ աշ-

---

229 *Г. Граматиков*, Производство на сусам и сусамено масло в Хасково, Българска етнография, 4, кн. 2, 1979, с. 51.

230 *Н. Абелов*, ук. соч., с. 96.

231 *Պ. Ոսկերչյան*, նշվ. աշխ., էջ 9:

232 *Մ. Սմբատեանց*, նշվ. աշխ.,էջ 188:

233 *ԴԱՆ*, 1971, էջ 26-27:

234 *ԴԱՆ*, 1982, էջ 11:

235 *Լ. Խաչիկյան*, նշվ. աշխ., էջ 34-35:

236 *Դ.Ս. Վարդումյան*, Լոռեցիների նոր կենցաղը, Եր., 1956, էջ 55:

խատանքներին մասնակցության դիմաց որոշակի ծառայություն էին ակնկալում, սակայն ամենուր ընդունված սովորույթ էի գործին սատար կանգնել, ինչպես Շիրակում էին ասում՝ «օղորմով» (բարեմաղթանքով):

Վկայություն կա, որ միջնադարում վանքապատկան տնտեսություններում նման աշխատանքներին մասնակցել են նաև միաբանները:[237]

Ձիթհանը ազատ տարածքում կառուցելու դեպքում հիմնականում ունեցել է ուղղանկյուն հատակագիծ, երբեմն միայն բարդացված ոչ խոշոր ելուստներով:[238] Այունիքում, Շիրակում, Գեղարքունիքում և Վայոց ձորում, հնարավորության դեպքում, դրանք կառուցվել են ժայռերին կից՝ վերջիններն օգտագործելով որպես բնական բեռ: Գորիսում ձիթհանների զգալի մասը ժայռափոր է եղել և պայմանավորված տեղանքով ու քերծի սմրությամբ, հատակագծային հորինվածքները տարբեր էին լինում:

Հայկական ձիթհանները հիմնականում տեղադրված են եղել մեկ ընդհանուր սրահում: Դրանցում սենյակների թիվը չի սահմանափակվել:[239] Որոշ դեպքերում դրանց մի անկյունում, որպես պահեստ մի սենյակ էի լինում: Ձիթհանի մուտքին մոտ, կալատան պատերից մեկի երկարությամբ սալահատակված գոմն էի՝ բանող լծկանի համար: Այունիքի և Արցախի ձիթհանների մի մասը առանձին գոմեր են ունեցել:[240]

Ձմռան ամիսներին ձիթհանները տղամարդկանց համար ծառայում էին նաև որպես հավաքատեղի-գրուցատեղիներ: Դրանց կալատներն ունեցել են նաև սաքուներ:[241]

Մատենագրական և վիմագրական աղբյուրներում հիշատակություններ կան երկու կալ և երկու գերանատուն ունեցող ձիթհանների մասին «:Ա: ջրաղաց ի Յոհանաւանք, :Ա: ձիթահանք :Բ: կալով :Բ: դրքատնով...»:[242] Ազգագրական իրականությունից նման կառույց մեզ հայտնի չէ: Կից պատերով ձիթհաններ, որոնց ընդհանուր պատը որպես բեռ է ծառայել երկուսի համար էլ, մեզ հայտնի են միայն Կոտայքից:[243]

Ձիթհանի կառուցումը բավականին թանկ և դժվար ձեռնարկում էր: Այն 19-րդ դարի վերջերին գնահատվել է մոտ 300 ռ., որի գործարկման դեպքում պետությունը գանձել է վեց ռուբլի տարեկան հարկ:[244] 1880-ական թվականներին ձիթհանն արժեր 620 ռ., որը բաշխվել է հետևյալ կերպ. շենքը՝ 400, աղացքարը՝ 50, կախքարը՝ 10, պողեսակը՝ 10, արջը՝ 12, չորս սանլոչ գերանները՝ 120, 35 գամբյուղները՝ երեք և մյուս պարագաները՝ 15 ռուբլի:[245]

Որպես եկամտաբեր հաստատություններ ձիթհանները ենթակա էին նաև առուծախի և նվիրատվության: Մեր հավաքած դաշտային նյութերը գալիս են հաստատելու անցյալ դարի ուսումնասիրողների այն կարծիքը, որ գերդաստանի քայքայման հետևանքով առաջացող փոքր ընտանիքները բաժանվելիս կիսում կամ մասերի էին բաժանում մինչ այդ ընդհանուր օգտագործման հողը, կենդանիները, գյուղատնտեսական գործիքները և մնացած կայքը, բայց ոչ ջրաղացներն ու ձիթհանները:[246] Անշարժ գույքից ժառանգման ենթակա էին տունը, օժանդակ կառույցները, ցանկապատված հողերը, ջրաղացները և ձիթհանները: Ներքին Բասենում ջրարբի հողամասերը, ջրաղացները, ձիթհանները, դաբբոցներն ու գերեգմանոցները ենթակա էին տոհմական օգտագործման:[247]

Սասունում ջրաղացի տերերից մեկը, ընդհանուր ծախսով, պատասխանատու էի շենքի համար: Նրանցից յուրաքանչյուրն իրավունք ուներ իր բաժինը վաճառել, բայց առաջին հերթին՝ բաժնեկիցներին:[248]

Դաշտային նյութերը վկայում են, որ դեռևս քսաներորդ դարի սկզբում ձիթհանի բաժնետերեր էին համարվում երեք, չորս և ավելի

---

[237] *ՀՀՀ*, հ. Գ, էջ 565:
[238] *Հ.Խ. Խալփախչյան*, նշվ. աշխ., էջ 39:
[239] *Ն.Ծ. Պապուխյան*, Այունիքի ժողովրդական ճարտարապետությունը, Եր., 1972, էջ 95:
[240] *ԴԱՆ*, 1971, էջ 43:
[241] *Դ. Կարապետյան*,Հայ գիւղացու մտաւոր եւ ընկերական կյանքեն (Ապահունիք,Մոկք), «Անահիտ», է տարի, 5, էջ 115:
[242] *Զաքարիա Քանաքեռցի*, էջ 28:
[243] *ԴԱՆ*, էջ 38:
[244] *ՀՊՊԱ*, ֆ. 94, գ. 217, g. 5, p. 26:
[245] *С.П. Зелинский*, ук. соч., с. 53-55.
[246] *ԱՀ*, գ. 10, 1903, էջ 129:
[247] *С.А. Егиазаров*, Административно-экономический строй сельской общины в Эриваской губ., Свод материалов, т. 1, Тифлись, 1887, с. 107.
[248] *Վ. Պետրոյան*, նշվ. աշխ, էջ 319:

անձինք: Նրանք, հիմնականում արյունակից ազգականներ էին, հաճախ՝ եղբայրներ, որոնք այն ժառանգել էին ընդհանուր օգտագործման համար: Երբեմն, երբ ազգակից բաժնետերերի թիվը մեծանում էր և առաջ էին գալիս ինչ-ինչ վիճելի հարցեր, ձիթհանը վաճառվում էր և գումարը բաժանվում նրանց միջև:[249] Վաճառքի դեպքում, հաճախ ձիթհանի տեր էր դառնում նախկին բաժնետերերից մեկը:

Հայտնի են դեպքեր, երբ ձիթհանը կամ նրա եկամտի մի մասը տրվել է որպես օժիտ: Դարասկզբին Սյունիքի մարզի Բռնակոթ գյուղի Սարվանանց ձիթհանի եկամտի կեսը, որպես օժիտ տրվել է տան աղջիկներից մեկին, որից հետո այն պատկանել է նույն ընտանիքին և Գյանջունց ազգատոհմից մի ընտանիքի:[250] Այս առումով հետաքրքրական տեղեկություն է պարունակում Բագնայրի 1207թ. մի արձանագրություն. «:ՈՕՋ: Ողորմութեամբն Աստուածոյ ես Աւաքի տիկոն, դուստր Գորգկանն միաբանեցա սուրբ ուխտիս եւ գիմ զհայրենի կէս ակն ձիթհանքն որ ի յիմ ծնողացն ի պսակր ներքեւ ինձ բաժին էր հասել ետու ի սուրբ Աստուածածինս...»:[251]

Որպես կանոն, չնչին բացառություններով: բաժնետեր ազգականներից մեկը՝ հմտանալով ձիթհանության ասպարեզում, դառնում էր ձիթհանի վարպետ: Հայտնի են դեպքեր, երբ բաժնետերերը ձիթհանը շահագործում էին հերթով: Տավուշի Բերդ քաղաքի Սահականց ձիթհանը դարասկզբին պատկանել է հինգ եղբայրների, որոնք ունեցել են հավասար իրավունքներ և պարտականություններ: Հիմնական պարտավորությունը ձիթհանն անխափան վոճակում պահելն էր, այն ժամանակեն վերանորոգելը: Ձիթհանի տերերը ստացվող եկամտից օգտվում էին հավասարաչափ: Նրանք այն աշխատեցնում էին հերթով, յուրաքանչյուրը երեք օր, սակայն հումքի պակասության և այլ պատճառներով, եթե ձիթհանը ողջ ծանրաբեռնվածությամբ չէր աշխատում և հարկադրական պարապուրդ էր տալիս, ամեն մեկը վերամշակում էր հումքի որոշակի հավասար քանակություն:[252]

Ձիթհանի վարպետը, որ հաճախ դրա տերն էր լինում, հավաքագրում էր այն սպասարկող աշխատակազմը, հումքի վերամշակման հերթ սահմանում (նոբաթ) և գանձում վարձը:

Վարձը տարբեր խոսվածքներում հայտնի է հրենիք (Սյունիք) և շհաթ ձևերով: Վարձատրությունը կատարվում էր բնամթերքով:

Ձիթհանի հզորությունից ու ծանրաբեռնվածությունից կախված, բանվորների թիվը հասնում էր մինչև վեցի: Տավուշում, վարպետի և 1-2 բանվորի հետ աշխատել է նաև հումքի տերը: Վերջինս ձիթհան էր տանում անհրաժեշտ քանակության վառելիք. փայտ, երեք-չորս քթոց ցան (աթար) և օրական երկու անգամ՝ բանվորների համար ուտելիք:

Աշխատանքները կազմակերպում էր վարպետը, որը հայերենի տարբեր խոսվածքներում հայտնի է ուստա, խալֆա, ձիթհանքի ջաղացպան անվանումներով: Բանվորները կոչվում էին. Սյունիքում՝ ասար, Շիրակում՝ ջոթ, Գեղարքունիքում՝ մալաք, Վասպուրականում՝ մոգիկ: Նրանք էլ, կապված ձիթհանում իրենց աշխատանքի բնույթից կոչվում էին մաղչի (մաղող) ֆռնջի (բովող), ջոմուշչի, քյալչի, բալաք (գոմշապահ):[253] Ձիթհանում աշխատելու համար համագյուղացիներից վերցնում էին նաև լծկաններ, որոնց տերերին մեկ բանվորի հասանելիքի չափով վարձ էր սահմանվում: Շատ դեպքերում լծկանների տերերը հրաժարվում էին վարձից, քանի որ ձիթհանում լծկանի աշխատելը ձեռնտու էր: Դա բացատրվում է նրանով, որ ձիթհանում լծկանին լավ էին խնամում, հաճախ ձիթում և քուսպով կերակրում:

Ձիթհանը մեկ հերթափոխում վերամշակել է մեկ ճյուղ (16 փութ) կտավատ կամ սորեկ: Շիրակում և Տավուշում ճյուղը հայտնի էր սըխի անունով:

Հումքը չափել են մեկ փթանոց փայտե կրտերով և կես փթանոց խաներով: Ձիթհանում օգտագործված հեղուկաչափերն են եղել նուկրն, հոխան (մեկ գրվանքա) և թուխտը (կես գրվանքա): Նուկին, ինչպես նաև 2,5 գրվանքա տարողությամբ շաբրիկը (Շիրակ) կավոց էին, իսկ թուխտը, որ օգտագործել են նաև ձի-

[249] Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերարերյալ արխիվային վավերագրեր, կազմ. Հ. Աբրահամյան, պրակ 1, Եր.,1941, էջ 121-122, *ՂԱՆ*, 1980, էջ 6:
[250] *ՂԱՆ*, 1976, էջ14:
[251] *Ղ. Ալիշան*, Շիրակ, էջ 122:
[252] *ՂԱՆ*, 1980, էջ 40-41:

թավաճառները՝ գոմեշի եղջյուրից:[254]

Երբեմն ձիթհանների տերերը շրջակա գյուղերից կես փթանոց կոտերով, որ կոչվում էրն սիլմա, հումք են հավաքել վերամշակելու համար: Նրանք ստացված ողջ ձեթը վերադարձրել են հումքի տիրոջը, իսկ քուսպը վերցրել վարձի դիմաց (Սիսիան):

Վերամշակվող 20 փութ հումքից ձիթհանի տերը ստանում էր 20 գբվանքա ձեթ և 1,5 փութ քուսպ: Նույնքան էլ ստանամ էրն ձիթհանի վեց բանվորները, որոնք այն բաշխում էրն հետևյալ կերպ. վարպետը ստանում էր քառորդ մասը, գոմշապահն ու բովողը՝ մյուս քառորդը, իսկ մնացածը հավասար կիսվում էր մյուս բանվորների միջև:[255]

Միջին հաշվով ձիթհանի տերն ստանում էր պատրաստի ձեթի 15-8 տոկոսը: Արցախում մեկ խան քնջութից ստացվում էր 15-16 գրվանքա ձեթ և ութ գրվանքա քուսպ, որից որպես վարձ տրվում էր եղկու գրվանքա ձեթ:

Արարատյան դաշտում և Նախիջևանում հումքի տերը. ձեթից ու քուսպից բացի, որպես վարձ պարտավոր էր տալ նաև երկու ավել և ձիթաճրագի մեկ պատրույգ: Հումքի տերը ձիթհանը լուսավորող երեք ձիթաճրագների համար ձեթ էր տալիս: Դրանք դրվում էրն աղացաքարի մոտ՝ սռնու ծայրին, գերանատանը՝ ավագանի մոտ և կախտանը:[256] Սիսիանում մեկ տիր (դիրք) հումքի դիմաց, որը հավասար է չորս սոմարի, տրվում էր 13,5 գրվանքա ձեթ և երկու փութ քուսպ: Այս բաշխվում էր հետևյալ կերպ. վարպետին՝ մեկ, բանվորներին և լծկանի տիրոջը կեսական գրվանքա. իսկ մնացածը՝ ձիթհանի տիրոջը:

Վարձատրությունը առավելապես կատարվում էր բնամթերքով, քանի որ դրամով վարձատրելու սովորույթը դեռևս մուտք չէր գործել, բացի այդ բնակչությունը դրամական միջոցներ չուներ:

---

[253] *ՊԱՆ*, 1974, էջ 18:

[254] *Հայոց Հայրիկ*, Պապիկ և թոռնիկ, էջմիածին, 1894, էջ 25:

[255] *ՊԱՆ*,1976, էջ 26:

[256] *ՊԱՆ*, 1980, էջ 33: